

ԵՐԱԿՐՈՆԵԱ ՄԱՅՐԱԿԱՆ

ՄԱՅՐ ԱԹՈՒՆ ՍՈՒՐԲ ԷԶՄԻԱՇՆԻ
ԿՐՈՆԱԿԱՆ, ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ,
ԼՐԱՏՎԱԿԱՆ ԵՐԿՇԱՐԱԹԱԹԵՐԹ

Մայր տաճարում կատարվեց Հայրապետական մատթանք

Նոյեմբերի 3-ին Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսի գահակալության 14-րդ տարեդարձի առիթով Մայր Աթոռ Սբ Էջմիածնում, մասնակցությամբ Մայր Աթոռի միաբանների եւ բազում ուխտավորների, կատարվեց Հայրապետական մատթանք:

Մատթանքի հանդիսավոր արարողությունը կատարվեց Պատարագի ավարտից հետո՝ Իջման Ս. Սեդանի առջեւ՝ հանդիսապետությամբ Ոսկան արք. Գալփաքյանի:

Մինչ մատթանքը՝ պատարագից սրբազան հայրը՝ Մայր Աթոռի վարչատնտեսական բաժնի տնօրեն Մուշեղ եպս Բաբայանը, շնորհավորական խոսք ասաց ազգընտիր Վեհափառ Հայրապետի գահակալության 14-ամյակի կապակցությամբ:

«Այսօր, սիրելիներ, այստեղ ենք, որպեսզի ցնծությամբ եւ ուրախությամբ խնդրենք Աստծուն, որպեսզի Նա Իր օրհնությունն անպակաս դարձնի հայ հավատացյալից եւ ընդհանրապես Հայ Եկեղեցին կազմող յուրաքանչյուր հայրորդուց, եւ առավել եւս այստեղ ենք, որ աղոթք բարձրացնենք մեր Հայրապետության համար եւ մեր աղոթքներով խնդրենք, որպեսզի Աստված քաջառողջ եւ բազում երկար տարիներ պարգևի Ամենայն Հայոց Հայրապետին»:

Խոսքի վերջում սրբազանը հայցեց Բարձրալից՝ ուժ եւ եռանդ պարգևել Հայոց Եկեղեցու բոլոր սպասավորներին՝ գլխավորությամբ համայն հայության հոգեւոր հոր՝ Գարեգին Բ Վեհափառ Հայրապետի:

Այնուհետեւ՝ Հայրապետական մատթանքի ընթացքում, ծնրաղիւր աղոթքներով, սաղմոսներով ու շարականներով եկեղեցականաց դասն ուխտավորների աղոթակցությամբ անսասանությամբ մատթեց Մայր Աթոռ Ս. Էջմիածնին եւ արդյունաշատ գահակալություն՝ Հայոց հովվապետին:

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՊԱՏԳԱՄԸ Եկեղեցիների համաշխարհային խորհրդի 10-րդ համագումարի բացմանը

Հոկտեմբերի 30-ին Հարավային Կորեայի Բուսան քաղաքում անցկացվող Եկեղեցիների համաշխարհային խորհրդի 10-րդ համագումարի բացմանը Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսն իր պատգամը հղեց համաժողովի 4000 մասնակցին:

«Եվ Նա ասաց նրանց. «Ո՛վ անմիտ եւ թուլասիրտ մարդիկ, որ դժուարանում եք հաւատալ այն ամենին, որ ասացին մարգարէները: Չե՞ր որ Զրիստոս պետք է Նոյն այդ չարչարանքները կրէր եւ այնպէս մտներ Իր փառքի մէջ»

(Ղուկաս ԻԴ 25-26)

թյունը այն փոքրիկ խմբի, որը շուտով պիտի դառնար Եկեղեցին: Վերնատունը Երուսաղէմում եւ համախմբված աշակերտները ներկայացնում են Զրիստոսի Սբ Եկեղեցին՝ իր ամբողջական ու փառավոր միության մէջ: Դա իրականացում է հարուցյալ Տիրոջ խոսքերի. «Ոչ թէ դուք Ինձ ընտրեցիք, այլ ես ձեզ ընտրեցի եւ ձեզ կարգեցի, որ դուք գնաք եւ պտղաբեր լինեք, եւ ձեր պտուղը մնայ, եւ ինչ էլ որ Իմ անունով Զօրիցս խնդրեք, ձեզ տայ: ...Այս եմ ձեզ պատուիրում. որ սիրեք միմեանց» (Յովհ. ԺԵ 16-17):

2000 տարի հետո մենք՝ յուրաքանչյուրս, նույնպէս ուրույն ճանապարհով շարունակում ենք այդ առաքելությունը: Մեր Տիրոջ



խոսքն ու գործը պետք է լինեն կշռադատված, սթափ եւ պատասխանատու, նույնիսկ՝ որոշ պարագաներում նրբազգաց: Այսուհանդերձ, սահմանափակել կամ ստվերել մեր միության Սկզբնաղբյուրին, նշանակում է «բարձունքի լույսը գրվանի տակ դնել»: Դա նշանակում է թաքցնել լուսավորության միակ աղբյուրը, որը կարող է ճեղքել աշխարհի խավարը եւ հստակություն հաղորդել մարդկության տեսիլքին:

Ծճարտություն է, որ նախաստվածաշնչյան հեթանոս մշակույթներն այնքան էլ չէին հոգում աշխարհի աղքատների մասին: Սակայն ժամանակակից հասարակությունը նույնպէս շատ քիչ ուշադրություն է հատկացնում մեզ շրջապատող աղքատությանը՝ լինի նյութական թե՛ հոգեւոր:

Շարունակությունը՝ 2



Յանուն Զօր եւ Որդւոյ եւ Զօրոյն Սրբոյ, ամէն:

Մենք փառք ենք տալիս Տիրոջը, Ով Իր ներկայությամբ լույս է սփռում մարդկանց սրտերում:

Քիչ առաջ մենք լսեցինք ավետարանական պատմությունը Էմափոսի ճանապարհին կատարված հրաշքի մասին: Այն պատմում է, թե ինչպէս Տեր Զիստոս Իր հարությունից ժամեր անց հայտնվեց Իր աշակերտներին եւ խոսեց նրանց հետ: Ծամփորդներն այնքան ընկճված էին, որ նույնիսկ չճանաչեցին իրենց Վարդապետին: Բայց Տերն Իր խոսքերով եւ ներկայությամբ փարատեց նրանց կասկածները՝ փոխանցելով նրանց հույսի եւ հավատքի ավելի խոր գագաթնը եւ գիտակցումը Աստծո փրկարար գործության:

Նրանք վերադարձան Երուսաղէմ եւ կիսեցին իրենց ուրախությունը Զրիստոսի հետեւորդների հետ՝ այդպէս փարատելով անհավատությունը եւ վիատու-

այս խոսքերը՝ հիշված սբ Զովհաննէս ավետարանչի կողմից, անտարակույս, նույն հնչողությունն ունեն այս հավաքի համար: Այսօր մենք նմանապէս միատեղ եւ միասիրտ ենք՝ հավաքված որպէս ճշմարիտ Որդատունկի ճյուղեր: Մեզանից յուրաքանչյուրը տարբեր է եւ յուրահատուկ, բայց մենք շիվերն ենք միեւնոյն արմատի: Մեզ միավորում են մեր ընդհանուր հավատքն առ Զրիստոս, մեր իրական սերն Աստծո հանդէպ: Միության այս օրինակն է, որ Էկումենիկ շարժման բոլոր մասնակիցները նախ եւ առաջ կոչված են ցուցաբերելու: Մենք պետք է ձգտենք հոգեւոր միության, հավատքի եւ ծառայության միության, որը աշխարհում վկայության միության՝ հանուն Զիստոս Զրիստոսի եւ Նրա Սբ Եկեղեցու:

Այդ վկայությունը նշանակում է խոսել Զրիստոսի անունով եւ գործել Նրա ներկայությամբ՝ պարզասրտությամբ եւ առանց երկմտության: Անշուշտ, մեր



Սկիզբը՝ էջ 1

Այս հաստատության մեր Տեղը հաստատեց Եկեղեցին՝ լինելու միջոցը Զրիստոսի մերձավորության այս աշխարհում: Եվ այդ առումով համաժողովի թեման առավել արդիական է այսօր, քան երբեք: «Կյանքի՝ Աստված, առաջնորդի՜ր մեզ արդարության եւ խաղաղության՝ նախ եւ առաջ գորացնելով Զրիստոսի Սբ Եկեղեցու առաքելությունը»:

Այսօր աշխարհի ամենամեծ խնդիրներից գերագույնը նախ եւ առաջ մարդու հեռանալն է Աստծուց՝ հաճախ կամավոր հեռանալը, հպարտ դիմադրությունը սիրող եւ արդար Գերագույն Եակի գաղափարի հանդեպ: Այս դիմադրությունը եւ հեռացումն Աստծուց ոչ այլ ինչ են, քան թողտվություն՝ արհամարհելու մարդու իրավունքը եւ ընդունելի համարելու նպատակին հասնելու ցանկացած միջոց:

Զրիստոնեությունը մեզ այլ ուղի է ուսուցանում. առաջնորդում է մեզ այլ ճանապարհով՝ Էմավուսի ճանապարհով: Այդ իրաջը հիշեցնում է մեզ, որ նույնիսկ ակնհայտ պարտության ժամանակ Զրիստոս մեզ

Հիմնարար արժեքների մեջ առաջինը բարոյականությունն է: Բարոյականության մասին շատ կարելի է խոսել, բայց ամենակարեւորն այն է, որ այն ուսուցանվում է օրինակով, եւ այդ օրինակը պետք է գա Եկեղեցուց: Մենք՝ որպես Եկեղեցու առաջնորդներ, պետք է բարոյական արժեքների օրինակ տանք, որոնք մենք ցանկանում ենք տեսնել աշխարհում եւ մեր շուրջը:

Որպես Եկեղեցի՝ մեր քարոզչությունը պետք է լինի Զրիստոսի սիրո եւ կարեկցանքի դրսեւորման օրինակ: Այն խտրականություն կամ պայմաններ չպետք է դնի, այլ պետք է ողջունի բոլորին սիրո ոգով: Մենք չենք կարող երաշխավորել արդյունքը, որ այն ամբողջությամբ կբուժի մեր հասարակությունների վերքերը, բայց այն մեր հասարակությունների կօժտի այդ վերքերը բժշկելու հոգեւոր միջոցներով:

Երկրորդ հիմնարար արժեքը կրթությունն է: Կրթությունը ջամբում է հարգանք մարդու նկատմամբ, սերմանում մարդկանց մեջ փոխըմբռնում եւ փոխգործակցություն: Այն ապահովում է նախապես անհասանելի հնարավոր

սի կամ կքանդի այն:

Երրորդ արժեքը, որը սերտորեն կապված է բարոյականությանը եւ կրթությանը, ընտանիքի հիմնարար հաստատությունն է: Այսօր մենք անհանգստացած ենք ոչ միայն տեսնելով, որ ընտանիքը զրկված է հասարակական աջակցությունից, այլ նաեւ՝ ընտանիքի գաղափարի աղավաղումով: Աստվածաշնչյան ժառանգության եւ 2000 տարվա քրիստոնեական քաղաքակրթության ըմբռնումը շատ պարզ է: Կնոջ եւ տղամարդու միությունը, սերունդների փոխշաղկապվածությունը, որ ներառում է երեխաներին, ծնողներին եւ ավագ ծնողներին. այս է մարդկության մեջ ճշմարիտ բազմազանության արտահայտությունը: Ընտանիքը խոր իմաստով իրականացնում է մեր այն հույսը, որ իրենց գնահատության մարդիկ կարող են միանալ սիրո բեղմնավոր միությանը:

Մեր հավատքը ընտանիքը որպես «դպրոց» է հռչակում, որն ուսուցանում է մարդու ամբողջականության մասին: Կուզեինք ավելացնել նաեւ, որ այս ընկալումը համահունչ է տարբեր քաղա-



կան պատկանելությունից, եւ աղոթում ենք Աստծուն ռազմական հակամարտությունների շուտափույթ դադարի համար, որպեսզի գերիշխեն բանականությունն ու երկխոսությունը:

Որպես Եկեղեցու անդամներ՝ մենք խորապես ազդվում ենք մեր եղբայրների եւ քույրերի անասելի տառապանքներից: Վերջին տարիներին մենք ավելի հաճախ ենք տեսնում, թե ինչպես ծայրահեղականների կողմից, երբեմն նաեւ իշխանությունների ան-

տարբեր երկրներում մեր ժողովուրդը հիշատակելու է իր պատմության ամենամեծ ողբերգության՝ Հայոց ցեղասպանության 100-ամյակը, որը ոճրագործվել է Օսմանյան Թուրքիայի կողմից: 1915 թվականից չորս սերունդ է անցել, սակայն այդ արհավիրքի հիշողությունը մնում է կենդանի, եւ արդարության փնտրտուքը, թեկուզեւ միայն պաշտոնական ճանաչման պարզ գործողության միջոցով, չի դադարելու:

Սա պիտի հիշեցնում լինի, որ այսօր աշխարհում տեղ գտնող դաժանությունը եւ դժբախտությունը ստվեր են գցելու 22-րդ դարի վրա եւ դրանից հետո: Մենք երախտապարտությամբ ենք նշում, որ ԵՀԿ-ն, մեր քույր Եկեղեցիները եւ ավելի քան 20 երկիր պաշտոնապես ճանաչել են Հայոց ցեղասպանությունը: Բայց պատկերացրե՛ք՝ ինչպիսի ցավից եւ դժբախտությունից կարող էր խուսափել ոչ միայն մեր ժողովուրդը, այլեւ՝ Եվրո-

հետ է: Նա հեռու չէ, այլ հավերժորեն մոտ է: Նա մեզ հետ է նույնիսկ այն ժամանակ, երբ մենք չենք ճանաչում Նրան: Նա սատարում է մեզ, սնուցում է մեր հոգիները եւ բացում մեր միտքը: Եվ այսպես գործելով՝ Զրիստոս ոգեշնչում է մեզ այլոց հետ կիսելու մեր ունեցածը մեծահոգությամբ, եղբայրության ոգով եւ հույսով: Զրիստոսի միջոցով մենք քաջալերվում ենք՝ հոգալու այլոց մասին, հարգելու մեր նմանին առանց բացառության՝ արժանապատվորեն եւ սրբությամբ: Սա է Զրիստոսի Սբ Եկեղեցու բացառիկ առաքելությունը, որը չի կարող իրագործվել որեւէ վարչական կառույցի կողմից կամ փոխարինվել տեխնոլոգիայով: Ինչպես որ այս հավաքի խորագիրն է առաջարկում, այդ առաքելությունը զորացնելն առաջին եւ ամենագլխավոր քայլն է այն ճամփորդության, որը տանում է դեպի աշխարհ, որտեղ խաղաղությունն ու արդարությունն են իշխում: Եվ այնտեղ հասնելու

րություններ եւ դրանով վերացնում բաժանումը դասերի, էթնիկ խմբերի, կրոնական եւ սոցիալական խավերի միջեւ: Ծմարիտ կրթությունը թույլ է տալիս մարդկանց դուրս գալ մարդկության բարգավաճ կյանքի հավերժական թշնամիների՝ սնահավատության, դաժանության, ատելության, նախապաշարմունքի մուր քարանձավից:

Ժամանակին կրթությունը հասու էր չէրին: Բայց 20-րդ դարը համընդհանուր կրթությամբ վերափոխում բերեց աշխարհի մեծ մասում: Սա իրապես նշանակալի շրջադարձ էր, որն արտահայտում է մարդկանց հավասարության քրիստոնեական բարոյական ըմբռնումը եւ ճշմարտությունը գիտակցելու՝ նրանց աստվածատուր կարողությունը:

Այսօր մենք չպետք է թույլ տանք, որ Եկեղեցին հեռու լինի ժամանակակից կրթական հաստատություններից: Մենք պետք է բարձր պահենք Եկեղեցու ինքնությունը՝ որպես ամենամեծ կր-

թություններում եւ ավանդական կրոններում ընդունված պատկերացումներին:

Իհարկե, որպես քրիստոնյաներ, մենք բացառիկ դեր ունենք ընտանեկան կյանքի զորացման մեջ, քանզի դա մեզ դնում է Աստծո հետ երկխոսության խոր համաբերության մեջ: Ի՞նչ է Սբ Ընտանիքն այն մարդու համար, ով երբեք ականատես չի եղել ավանդական ընտանիքին: Ինչպե՞ս մենք կհասկանանք Մանուկ Հիսուսի հրաշքը, եթե երեխայի ծնունդը ավելի բեռ է համարվում, քան՝ օրհնություն հույսի: Ո՞րն է «Հայր մեր» աղոթքի իմաստը հասարակության մեջ, որտեղ հայրությունն արժեզրկվում է:

Չոհաբերության այս տեսակը, որը հաճախ ընտանեկան կյանքի մի մասն է, ամբողջապես համապատասխանում է քրիստոնեության կոչին՝ զոհաբերվել դիմացինի համար եւ հոգ տանել թույլերի մասին: Երբ ընտանիքն անկում է ապրում, Եկեղեցին նույնպես թուլանում է: Հետեւաբար, մենք կենսական կարեւոր դեր ունենք ուժեղ, բարի եւ սիրող ընտանիքներ ձեւավորելու եւ պաշտպանելու գործում:

Եվ վերջինը՝ ի՞նչ կարող ենք ասել խաղաղության արժեքի մասին: Խաղաղությունը մեր աշխարհում դեռ մնում է որպես երեւակայական իրողություն: Մենք հավատում ենք, որ այս իրողությունը 21-րդ դարի ամենահավոր եւ ապաբարոյական անակնկալն է: Զրիստոնեական 3-րդ հազարամյակի համար մենք բոլորս ունեցել ենք ավելի դրական, ավելի հուսալի ակնկալիքներ աշխարհից, քան այն, ինչ մենք հիմա տեսնում ենք մեր շուրջը:

Հատկապես ցավալի են քաղաքացիական խռովությունները, աճող բռնությունները եւ շարունակվող պատերազմները Մերձավոր Արեւելքում, հասկապես՝ Սիրիայում եւ Եգիպտոսում: Վստահաբար մեր սրտերը բոլոր այն մարդկանց հետ են, ովքեր տուժում են անօրինականություններից եւ բռնություններից: Մենք աղոթում ենք բոլոր ընտանիքների համար՝ անկախ նրանց էթնիկ, կրոնական եւ ռասայա-

տարբերությամբ՝ դավանանքի պատճառով բռնություններ են կիրառվում քրիստոնյաների նկատմամբ: Առաքյալների ժամանակներից սկսած՝ այս քրիստոնյա համայնքները, նրանց մեջ՝ նաեւ հայերը, ապրել են ստեղծագործ կյանքով եւ խաղաղության մեջ ողջ Մերձավոր Արեւելքում՝ նպաստելով տարա-



ծաշրջանի երկրների զարգացմանը: Զրիստոնյաները պատմականորեն խաղաղություն կերտողի դեր են ստանձնել ողջ տարածաշրջանում: Եվ այսօր նրանց հանդեպ վերաբերմունքն արդարության ընկալումն է իրենց երկրներում, ցուցանիշ, թե արդյո՞ք մարդու հիմնարար իրավունքները հարգվում են տեղական իշխանությունների եւ բնակչության մեծամասնության կողմից: Բռնություններին գոհ գնացող քրիստոնյաները ողջ Մերձավոր Արեւելքում մեր օրերի մարտիրոսության վկաներն են: Դա մեր եւ մեր երկրների, ինչպես նաեւ այս համագումարի համընդհանուր խնդիրն է՝ միավորել մեր խոսքն ու գործը՝ կանխելու նման բռնությունները եւ նպաստելու տարածաշրջանում խաղաղության հաստատմանը:

Այս իրականությունն առանձնակի ուժգնությամբ է առնչվում մեզ՝ որպես հայ քրիստոնյայի: Մեր քրիստոնյա եղբայրների տառապանքները շատ ծանոթ են մեր ժողովրդին: 2015 թ. Հայաստանում, Լեռնային Ղարաբաղում եւ աշխարհի

պայում, Աֆրիկայում եւ այլ մայրցամաքներում ավելի ուշ տեղի ունեցած ցեղասպանությունների զոհերը, եթե աշխարհը ձեռնարկեր կանխելու մեկ դար առաջ՝ 1915 թ. իրականացված ոճրագործությունը:

Որպես Եկեղեցիներ՝ մենք պետք է բողոքենք այն բոլոր հանցագործությունների դեմ, որոնք այսօր տեղի են ունենում աշխարհի աչքի առաջ: Եվ մենք պետք է համարձակ խոսենք մարդու իրավունքների համընդհանուր ուսմունքի մասին՝ անկախ այն բանից, թե այն ներառում է կյանքի համար պայքարը Սիրայում եւ Եգիպտոսում, թե՞ այն պայքար է ինքնորոշման համար Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունում: Մենք պետք է հաստատենք միաձայն, որ այս հիմնական իրավունքների խախտումը չի հանդուրժվելու աշխարհի ոչ մի ծայրում, քանի որ առանց արդարության եւ մարդու իրավունքների հաստատման, այն խաղաղությունը, որը մենք փնտրում ենք, կլինի ժամանակավոր եւ փխրուն:

Շարունակությունը՝ 3



համար մենք պետք է ամենայն խոնարհությամբ կամք դրսեւորենք՝ առաջնորդվելու Կենարար Աստծո կողմից:



Նա մեզ առաջնորդում է դեպի բազմաշերտ աշխարհ՝ «բազմաթիվ օթեւաններով հարկ», որտեղ կյանքի տարբեր ուղիներ ընտրած մարդիկ կարող են գտնել իրենց իրական օթեւանը: Այդ տան հիմքը եւ հիմնարար արժեքները հստակ են:

թական հաստատություն մարդկության պատմության զարգացման ընթացքում: Մենք պետք է ներկա գտնվենք կրթության բոլոր հարթակներում, իրազեկ լինենք մարդկային հարցադրումների մեծ դաշտում: Մենք պետք է ուղղորդենք գիտության, հատկապես բարձր տեխնոլոգիաների բոլոր ձեռքբերումները դեպի մարդու բարօրություն, ինչը կբարձրացնի եւ կհարստացնի մարդային կյանքը եւ ոչ թե կվա-

Սկիզբը՝ էջ 2

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՊԱՏՉԱՄԸ ...

Մայրուհի արժեքները, որոնք մենք ընդգծել ենք այստեղ, քրիստոնեության 2000 տարվա պատմության պատկերներն են: Նրանք այն ժառանգության մասն են, որը մենք՝ որպես եկեղեցի, ժառանգել ենք: Դրանց խթանումը մարդկային հասարակության մեջ այն առաքելության մասն է, որին մենք կոչված ենք: Մենք պետք է իրականացնենք այդ առաքելությունը մեծագույն խոնարհությամբ: Բայց մենք նաեւ պետք է մեծապես վստահ լինենք, որ մարդկային այդ արժեքները միշտ գտել են իրենց ամեն



նաբարձր դրսևորումները ի Զրիստոս Հիսուս եւ Նրա հիմնադրած շարժման մեջ:

Այսօր աշխարհում ամենուր ականտես են լինում խառնաշփոթի եւ ցավի տարբեր դրսևորումների: Հատկապես դժվարին պահերին ենք պատկերացնում, որ հագիվ ենք տեսնում Զրիստոսին: Բայց այստեղ նորից Էմավուսի հրաշքն ուսուցանում եւ մխիթարում է մեզ: Էմավուսի ճամփորդները եւս շփոթված եւ հուսալքված էին: Նրանք եւս չճանաչեցին Տիրոջը: Բայց երբ հարուցյալ Փրկիչը մոտեցավ նրանց, նրանց ուղեկիցը դարձավ ու փարատեց նրանց մտահոգությունները, Նրա բառերն ու ներկայությունն աշխարհին իմաստավորեցին:

Սա մի պատգամ է, որ մենք պետք է ընդունենք՝ որպես եկեղեցի, որպես Զրիստոսի մարմին երկրի վրա: Մեր ծգտումը՝ նպաստելու խաղաղությանը եւ արդարությանը եւ յուրաքանչյուր մարդկային բարիքի, սկսվում է մեր ժողովուրդների՝ Զրիստոսի հետ իր ճանապարհին հանդիպումով: Մենք պետք է մոտենանք նրանց կարեկցությամբ, ուղեկից դառնանք նրանց, օգնենք նրանց տանելու իրենց բեռը: Այս վեհ նպատակը հետապնդելիս մենք պետք է մեր ոտքերը ամուր դնենք գետնին՝ նայելով մեր ժողովրդի աչքերի մեջ, խոսելով նրանց հետ Հիսուս Զրիստոսի անունից, գործելով նրանց մեջ Հիսուս Զրիստոսի ներկայության համոզումով:

Այսօր Մեր սիրտն ուրախությամբ եւ մխիթարությամբ է լցվում, որ միացել ենք այս համաժողովի աղոթքին՝ խնդրելով Աստծուն, որ զորացնի Զրիստոսի Սբ Եկեղեցու այս հուսալի առաքելությունը: Թող այս ոգին միշտ պարուրի մեր սրտերը, եւ թող այն առաջնորդի մեզ դեպի ճշմարիտ խաղաղություն եւ արդարություն մեր Տեր եւ աշխարհի Փրկիչ Հիսուս Զրիստոսի միջոցով:

Շնորհակալություն եւս մեկ անգամ՝ այս համաժողովին դիմելու հրավերի համար՝ ի Զրիստոս եղբայրական սիրո ջերմ մթնոլորտում:

Թող Տիրոջ շնորհը, սերը եւ խաղաղությունը ձեզ հետ, մեր ժողովուրդների հետ լինեն: Ամեն:

Հոկտեմբերի 31-ին շարունակվեց Եկեղեցիների համաշխարհային խորհրդի 10-րդ համաժողովը, որին Ն. Ս. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսի գլխավորությամբ մասնակցում էր Ամենայն Հայոց Կաթողիկոսության պատվիրակությունը: Առավոտյան համաժողովին ուղերձով դիմեց Հարավային Կորեայի վարչապետ Չանգ Հոնգվոնը: Օրվա առաջին պլենարի նիստն ատենապետեց ԵՀԿ

մանը մասնակցեցին Շիրակի թեմի առաջնորդ Միքայել եպս Աջապահյանը եւ Մայր Աթոռի եկեղեցական հայեցակարգային հիմնադրությունների գրասենյակի տնօրեն Բագրատ եպս Գալստանյանը, «Կյանքի, արդարության եւ խաղաղության բարոյագիտական ընտրությունը» թեմայով քննարկմանը՝ Ավստրալիայի հայոց թեմի առաջնորդ Հայկազուն եպս Նաշարյանը, «Միջին Արեւելք, ո՞ւմ արդարությունը, ո՞ւմ խաղաղությունը» թեմայով քննարկմանը՝ Երուսաղեմի Ս. Հակոբյանց վանքի միաբան Բագրատ վրդ. Պուրճեկյանը, «Մարդու ապահովություն. խաղաղության, արդարության եւ իրավունքի զարգացում» թեմայով քննարկմանը՝ հայաստանյան «Կլոր սեղան» միջեկեղեցական բարեգործական հիմնադրամի տնօրեն Կարեն Նազարյանը:

Պատվիրակության անդամ, Լոզանի համալսարանի դոկտորանտ Անի Ղազարյանը զեկույցով հանդես եկավ «Վերանորոգություն փոփոխությամբ. սուրբգրային աղբյուրն Եկումենիկ միջավայրում» թեմայի քննարկման շրջանակներում:

Երեկոյան պատվիրակության անդամները մասնակցեցին նաեւ տարածաշրջանային ներկայացուցիչների համապատասխան հավաքներին:

Համաժողովի շրջանակներում հոկտեմբերի 31-ին Ն. Ս. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսը, ի թիվս բազմաթիվ հանդիպումների, հանդիպում ունեցավ նաեւ Հունգարիայի Կաթոլիկ Եկեղեցու ներկայացուցիչ Գուստավ եպս Բոլսկի եւ Հունգարական եկեղեցիների խորհրդի գլխավոր քարտուղար դոկտոր Վիլմոս Ֆիսչելի հետ:

Մասնավոր անդրադարձ կատարվեց Հունգարիայի իշխանությունների կողմից սպա Ռամիլ Սաֆարովի՝ Ադրբեջանին արտահանձնման խնդրին: Վեհափառ Հայրապետը, ցավով արձանագրելով, որ կատարվածը մեծապես ստվերել է հայ-հունգարական բարեկամությունը, նշեց, որ նման երեւոյթներն անընդունելի են եւ իբրեւ ազգատեցու-

քննարկվող բանաձեւին եւ պատրաստակամություն հայտնեցին իրենց ամբողջական մասնակցությունն ու աջակցությունը բերելու տարեկիցի առիթով Հայոց Եկեղեցու կողմից կազմակերպվող բոլոր միջոցառումներին:

Վեհափառ Հայրապետը գոհունակությամբ ընդունեց Հունգարիայի ներկայացուցիչների պատրաստակամությունը՝ նրանց բերելով իր գնահատանքն ու օրհնությունը:

Նոյեմբերի 3-ին Մայր Աթոռի պատվիրակությունը ներկա գտնվեց ղպտի եւ հույն եկեղեցիներում կատարվող Պատարագին:

Հընթացս ղպտի ուղղափառ եկեղեցում մատուցված սրբազան Պատարագի՝ **մասնավոր հիշատակության արժանացավ եւ տոնախմբվեց Ն. Ս. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսի գահակալության 14-րդ տարեդարձը:**



Այս առիթով Ղպտի Ուղղափառ Եկեղեցու Թաուադրոս Պատրիարքի կողմից Հայ Եկեղեցու պատվիրակությանը փոխանցվեց Սբ Դամիթիեի վանքից բերված երկու սրբապատկեր:

Շնորհակալություն հայտնելով ջերմ ընդունելության, ինչպես նաեւ Վեհափառ Հայրապետի եւ Հայ Եկեղեցու համար կատարված աղոթքի կապակցությամբ՝ Հայ Եկեղեցու պատվիրակությունը Ղպտի Եկեղեցու ներկայացուցիչներին Վեհափառ Հայրապետի անունից հանձնեց Սբ Էջմիածնի զարդաքանդակ՝ փոխանցելու Թաուադրոս Պատրիարքին:

Եկեղեցիների համաշխարհային խորհրդի 10-րդ համագումարի՝ Նոյեմբերի 6-ի նիստում «Պետականազուրկ ժողովուրդների իրավունքի մասին» հայտարարության քննարկման ժամանակ Ամենայն Հայոց Կաթողիկոսության պատվիրակության կողմից բարձրացվեց Լեռնային Ղարաբաղի ժողովրդի ազատ ու անկախ ապրելու իրավունքի պաշտպանության հարցը: Պատվիրակությունը կոչ արեց ԵՀԿին՝ դատապարտելու այս հարցի առնչությամբ աշխարհում կիրառվող երկակի չափանիշները:

Նույն օրը համաժողովի շուրջ 345 եկեղեցու 3000 պատվիրակ Հայոց ցեղասպանության 100-ամյա տարեկիցի առիթով ընդունեց հատուկ բանաձեւ, որն արդյունքն էր Ն. Ս. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի եւ Ն. Ս. Ս. Օ. Տ. Արամ Ա Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոսի պաշտոնական դիմումների, ինչպես նաեւ՝ ԵՀԿ Կենտրոնական կոմիտեում Հայ Եկեղեցու նվիրակների հետեւողական աշխատանքի:

Նշյալ բանաձեւով որոշվեց՝ 1. 2015 թ. ապրիլի 24-ի շրջանում ժնեւում կազմակերպել միջազգային կոնֆերանս՝ Եկեղեցիների համաշխարհային խորհրդի անդամ եկեղեցիների, միջազգային զանազան կազմակերպությունների, իրավաբանների, իրավապաշտպանների մասնակցությամբ:

2. Սույն միջազգային կոնֆերանսին զուգընթաց կազմակերպել միջեկեղեցական աղոթք ժնեւի Մայր տաճարում:

3. Միջազգային կոնֆերանսի օրերին հրավեր ուղղել աշխարհի բոլոր եկեղեցիներին՝ աղոթել հայոց նահատակների համար:

Բանաձեւը, որ Հայոց ցեղասպանության 100-ամյա տարեկիցին ընդառաջ վերահաստատեց 1983-ին ընդունած ԵՀԿ դիրքորոշումը, նշանակալի ձեռքբերում էր Հայոց ցեղասպանության ճանաչման գործընթացում:

Նոյեմբերի 6-ի նիստերից մեկում տեղի ունեցավ նաեւ ԵՀԿ Կենտրոնական կոմիտեի ընտրությունը: Ամենայն Հայոց Կաթողիկոսության երկու պատվիրակներ Վիգեն արք. Այբազյանը եւ Փոլա Տեր-Մաթոյանը վերընտրվեցին ԵՀԿ Կենտրոնական կոմիտեի անդամ:

Հայաստան վերադարձից առաջ Ամենայն Հայոց Հայրապետն այցելեց Չինաստան, մասնավորապես՝ Պեկին, Շանհայ, Քուանգու քաղաքներ, ինչպես նաեւ՝ Հոնկոնգ՝ ծանոթանալու հայ համայնքային կյանքին եւ իր օրինությունը փոխանցելու հայորդիներին:

Հոնկոնգում Նոյեմբերի 9-ին Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսը ներկա գտնվեց «Հայ տուն» կենտրոնի բացման արարողությանը, որին ներկա էր տարածաշրջանի քաղաքներից ու տարբեր երկրներից ժամանած շուրջ 150 հայորդի: Ազգային ու հոգեւոր կյանքի կազմակերպման համար կենտրոնի սրահը Հոնկոնգի հայ համայնքին տրամադրել են տեղ եւ տիկին՝ Ջակ եւ Ջուլի Մաքսյանները:

Արարողության ընթացքում Վեհափառ Հայրապետն իր օրհնությունն ու պատգամը բերեց հավաքված հայորդիներին: Ամենայն Հայոց Կաթողիկոսը «Հայ տուն» կենտրոնի համար օծեց նաեւ Աստվածամոր սրբապատկեր եւ վեմ քար, որպեսզի կենտրոնում պարբերաբար Պատարագներ մատուցվեն՝ տեղի հայ համայնքի հոգեւոր կարիքների համար:

Նոյեմբերի 11-ին Ն. Ս. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսը վերադարձավ Մայր Աթոռ Ս. Էջմիածին:



կյանն ընդգրկված էր ռազմավարության մշակման հանձնախմբում, Դամասկոսի հայոց թեմի առաջնորդ Արմաշ եպս Նալբանդյանը՝ ծրագրային ուղեւիշների մշակման հանձնախմբում, իսկ Մայր Աթոռի միջեկեղեցական հարաբերությունների բաժնի աշխատակից Գոհար Ղալաչյանը՝ ընտրական հանձնախմբում:

Եկումենիկ երկխոսությունների շրջանակում «Դիակոնիան եւ զարգացումը արագ փոփոխվող աշխարհում» թեմայով քննարկ-

թյան քարոզչություն՝ համընդհանուր դատապարտության պետք է արժանանան:

Հունգարական եկեղեցիների ներկայացուցիչներն իրենց հերթին դատապարտեցին Հունգարիայի կառավարության կատարած քայլը:

Չրույցի ընթացքում Հունգարիայի եկեղեցիների պատվիրակությունը նաեւ իր աջակցությունը հայտնեց ԵՀԿ 10-րդ համաժողովում Հայոց ցեղասպանության 100-ամյա տարեկիցի վերաբերյալ

ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍՆԵՐ

ՂՈՒԿԱՍ Ա ԿԱՐՆԵՋԻ (1780-1799)

1780 թվի հուլիսի 28-ին՝ Սիմեոն կաթողիկոսի թաղման հաջորդ կամ մահվան երրորդ օրը, Մայր Աթոռում միաբանության կողմից մեծ ժողով գումարվեց, որին մասնակցեցին Երեւանի եւ շրջակայքի երեւելիները՝ քննելու նոր կաթողիկոսի ընտրության խնդիրը։ Վերջին շրջանում սովորություն էր դարձել միաբանության երկու-երեք թեկնածուի առաջարկվելը, հետո աշխատում էին իմանալ ազգի կարծիքը՝ ի դեմս Երեւանի, Ջուղայի, Տփղիսի եւ մանավանդ Կ. Պոլսի ազգայինների, եւ ընտրվածն օծվում էր ու կաթողիկոսական աթոռ բարձրանում։ Սակայն հապճեպ ընտրություններ ու օծումներ եւս տեղի ունեցան, որոնց ազգը համակերպվելով ընդունել էր։ Հարց ծագեց, թե՞ պետք չէ ընտրությունն ուշացնել, եւ հարկավոր է խնդիրն անմիջապես լուծել։ Ի վերջո հաղթեց իշխող կարծիքը. ժամանակներն անհանգիստ են, ուստի վտանգավոր է Մայր Աթոռն անգլուխ թողնելը, եւ ընտրությունն արագացրին։ Այդ անհրաժեշտությունը մեծացնող հանգամանքների թվում նկատի առնվեց այն փաստը, որ Գանձասարի վտարված Խորայել կաթողիկոսը Տփղիսում իր կողմն էր գրավել Վրաց թագավոր Զեթախիլի եւ օգտվելով վերջինիս երեւանյան հաղթանակից՝ Սիմեոնի հիվանդության շրջանում սկսել էր գլուխ բարձրացնել։ Իսկ մահից երկու շաբաթ առաջ Տփղիսում կեղծ լուրեր էր տարածել, թե կաթողիկոսը վախճանվել է, եւ կաշառքներ

ով ու խաբեությամբ շարժում էր սկսել, որ Հերակլի օգնությամբ տիրանա կաթողիկոսությանը։ Ինքնընծա թեկնածու էլ հայտնվեց՝ Գալուստ Ներսիսյան եպիսկոպոսը, որի մասին ասվում էր, թե բորչալուցի 300 թուրք է վարձել, որ բռնությամբ տիրանա Մայր Աթոռին ու գանձապետ Սկրտիչ եպիսկոպոսի կարգադրությամբ Գեղարքունիքի տարբեր մասերից 200-ի չափ երիտասարդ է հավաքվել վանքում, որ այդ թույլ չտա։ Սիմեոնի հիվանդության օրերին շրջակա թուրքերն սկսել էին յուրացնել Էջմիածնի կալվածները. հափշտակել էին մի գյուղ, երկու մեծ այգի, փորձում էին տիրել նաեւ մերձակա գյուղերին։ Նրանք վնասելու սպառնալիքներ էին արձակում՝ տեսնելով, որ Աթոռը թափուր է։ Միաբանության վրա մեծ ազդեցություն ուներ նաեւ մահացած կաթողիկոսի վերջին կամքը, որ այդ վտանգաշատ ժամանակներում Աթոռն անայցելու չմնա։ Ժողովականների մեծ մասը հակված էր դեպի Ղուկասը, որի գործունեությունը վերջին տարիներին բարձր էր գնահատվել, եւ որի թեկնածությունն առաջադրել էր Սիմեոնը։ Դրան հակառակվողները բարձրացնում էին Կ. Պոլսի պատրիարք Չաքարիայի թեկնածությունը, թե նա ավելի կարող ու գործունյա է։ Սակայն շատերին վախեցնում էր նրա խիստ եւ բուռն բնավորությունը։ Չաքարիային հատկապես պաշտպանում էր Սահակ Գեղամացի եպիսկոպոսը, որը նաեւ Փառակե

ցի է կոչվել՝ իր ծննդավայր Փառականք գյուղի անունով։ Սա գտնում էր, որ պետք է ստանալ պոլսահայերի հավանությունը եւ նոր միայն կաթողիկոս ընտրել։ Սկրտիչ ու Սահակ եպիսկոպոսները մտան վեճի մեջ, որի ժամանակ ժողովականները պաշտպանեցին Սկրտիչին եւ դուրս եկան Սահակի դեմ, որին նրանց ձեռքից դժվարությամբ ազատեց Հովհաննես Զյալ մելիքը եւ տարավ իր սենյակը՝ հանգստացնելու։ Այդ միջադեպից հետո Գալուստ եպիսկոպոսը տեղից բարձրացավ եւ վեղարը հանելով՝ գնաց համբուրեց Ղուկաս Կարնեցի եպիսկոպոսի աջը՝ ասելով. «Կեցցե տեր մեր սրբազան»։ Ներկաները նրան պաշտպանեցին, եւ Ղուկասն ընտրվեց։ Նույն ժողովում որոշվեց Ղուկասին անմիջապես Աթոռ բարձրացնել։ Հապճեպ պատրաստություններ սկսվեցին օծումն իրագործելու ուղղությամբ։ Ղուկասը բավականին փորձեց ընդհիմանալ, սակայն ժողովականները նրան պարզապես պարտադրեցին համաձայնել։ 1780 թվի օգոստոսի 2-ին՝ Սիմեոնի մահից ութ օր հետո, Ղուկաս Կարնեցին օծվեց կաթողիկոս։ Նա անմիջապես քայլեր է ձեռնարկում Մայր Աթոռի պաշտպանության համար, շրջաբերականներ է ուղարկում այլ լեւոյն կողմեր՝ պատվիրակ վարդապետների ձեռքով։ Ղուկաս Կարնեցին ծնվել է 1722 թվին եւ ապրեց 77 տարի։ Նրա խոսքերով՝ 36 տարի առաջ՝ Երուսղեմի օրը, դեռեւս տղա



էր, այսինքն՝ 26-ամյա երիտասարդ։ Ծնունդով նա ոչ թե Կարին քաղաքից էր, այլ գավառից՝ Կեղի կամ Զղի ավանից, որը գտնվել է Խորձյան գավառում։ Ուսումն ստացել է Մայր Աթոռում՝ Սիմեոնի մոտ, քահանա է ձեռնադրվել 1751 թվին՝ լուսարարապետ Եղիազար եպիսկոպոսի ձեռամբ։ Դառնալով վարդապետ՝ որպես նվիրակ գնացել է Ռումելի եւ Դրիմ։ 1763 թվի հունիսի 17-ին Սիմեոն կաթողիկոսն իր օծումից 58 օր հետո նրան ձեռնադրում է եպիսկոպոս՝ Եսայի Նախիջեւանցի եւ Պետրոս Բերդումյան վարդապետների հետ միասին, սակայն նա եղել է Սիմեոնի անդրանիկ եւ շնորհածին աշակերտը, որին շատ չանցած՝ 1764 թվի մարտի 11-ին, վանքից դուրս պաշտոն տվեց՝ որպես նվիրակ ուղարկելով Զմյուռնիա։ Ղուկասն այստեղ մնաց մինչեւ 1775 թվը՝ օգտակար գործունեություն ծավալելով հատկապես տպագրության հարցում։ Իսկ երբ նրա ժամկետն ավարտվեց, զմյուռնիացի խնդրագիր ուղարկեցին կաթողիկոսին, որ Ղուկասին իրենց տա, սակայն Սիմեոնը չհամաձայնեց, քանի որ կամենում էր նրան իր մոտ պահել։ Նրա հաջորդ նշանակվեց Եսայի վար-

դապետը, որը 1775 թվի հունիսի 23-ին ճանապարհվեց Զմյուռնիա, իսկ Ղուկասը տարվա վերջին վերադարձավ Մայր Աթոռ։ Դրանից հետո նա մշտապես մնաց Էջմիածնում՝ որպես Սիմեոնի խորհրդական, որն այդ ժամանակ հիվանդ էր ու կարողունակ գործակցի կարիք ուներ։ Սիմեոնի կողմից Ղուկասին տրված բարձր գնահատականը հավուր պատշաճի բնութագրում է նրան։ Որպես կաթողիկոս՝ նա աչքի ընկավ ծանրաբարեւ անձնա զործունեությամբ՝ գրավելով բոլորի սրտերը։ Լինելով Սիմեոնի առաջադեմ աշակերտներից՝ նա հանդես եկավ լատինամոլ թեթեամիտների դեմ, որոնք անարգում էին Հայոց Եկեղեցին։

Սովորություն կար օսմանյան սուլթանի կողմից կաթողիկոսի հաստատման հրովարտակ ստանալու, չնայած երկիրը եւ Մայր Աթոռը պարսից տիրապետության տակ էին։ Ղուկասի հաստատման պաշտոնագիրն օգոստոսի 17-ին Կ. Պոլիս տարավ Պետրոս Խոզարածյանը, որը նաեւ Սեթ է կոչվել։ Սակայն լուրն արդեն տեղ էր հասել գույժի տեսքով՝ որպես անհաճո գործ, եւ գրավել բոլորի ուշադրությունը։ Պոլսեցիք վշտացած էին, որ իրենց ձայնը հաշվի չի առնվել, իրենց իրավունքը ոտնահարված է, ուստի որոշեցին ընդդիմանալ։ Հատկապես զայրացած էր Չաքարիան՝ դա համարելով անձնական վիրավորանք։ Նա իրեն էր համարում կաթողիկոսին արժանի հաջորդը՝ իր արդյունավորությամբ ու արժանավորությամբ իրեն վեր ուստելով Մայր Աթոռի բոլոր եպիսկոպոսներից։ Նա ավելի զայրացավ, երբ ստացավ Սահակ Փառակեցու նամակը՝ ընտրության միջադեպի նկարագրությամբ։

Շարունակությունը՝ էջ 5

Մարկելին ՕԼԵՍԵՆԻՑԿԻ

Սկիզբը՝ թիվ 20

գ) Աղաժխարություն եւ հավաս

Եթե ավելի հստակ վերլուծենք դարձի ընթացքը, ապա դրա մեջ կտեսնենք երկու կողմ՝ ապաշխարություն եւ հավատ։ «Ապաշխարեցե՛ք եւ հավատացե՛ք Ավետարանին» (Մարկ. Ա 15),- այս խոսքերով է Աստված սկսում իր խոսքը։ Այդ մասին քարոզել է նաեւ Հովհաննես Մկրտիչը (Մատթ. Գ 2)։ Առաջինը՝ ապաշխարությունը, բացասական պահն է, իսկ երկրորդը՝ հավատը՝ դրական։ Այդ երկուսը չեն համարվում առաձին գործողություններ, այսինքն՝ սկզբում կատարվում է առաջինը՝ ապաշխարելը, իսկ հետո մյուսը՝ հավատալը։ Սրանք ընդհանուր են։

Ապաշխարությունը սեփական մեղքի գիտակցումն է եւ հոգու խորքում դրա մերժման վճռականությունը։ Ապաշխարակի մեջ կան եւլ գոյում, եւլ խոստովանություն։ Չղջումը ներքին խոր վիշտ է, հոգեկան տանջանք, որոնք ուղեկցվում են սեփական մեղքերի դատապարտությամբ։ Եթե գոյումը չվերածվի ապաշխարանքի (այսինքն՝ ի սրտե ազատվել մեղքերից եւ արժանանալ Աստծո օրհնությանն ու ողորմությանը), ապա այն կվերածվի հուսահատության, քանի որ մարդը չի գտնի իր մեղքերի համար վճարելու որեւէ տարբերակ։ Սակայն գոյություն ունի աղբյուր, որից մարդ քաղում է «շնորհի՛ շնորհի՛ փոխարեն» (Հովհ. Ա 16)։ Չղջում եւ մեղքերի թողության համար ներման խնդրանք լինելուց բացի, ապաշխարությունը մարդու մեղանշական լինելու, Աստծուց հեռանալու ընդհանուր զգացողությունն է։ Նայելով մարդու անհա-

ՎԵՐԱԾՆՈՒՆԴ ԵՎ ՕՐՀՆՈՒԹՅՈՒՆ



տականությանը՝ գոյման ընթացքն ուղեկցվում է լուռ տխրությամբ եւ խռովածությամբ կամ անհանգստությամբ։ Որպես գոյման օրինակ՝ կարող ենք բերել Հին Կտակարանից Դավիթ թագավորին, իսկ Նոր Կտակարանից՝ մաքսավորին։

Իսկ հավատը Հայտնության ճշմարտացիության, հատկապես մարդկության փրկության համար Զրիստոսի կրած սոսկալի չարչարանքների խոստովանությունն է։ Այս ամենը ցույց է տալիս, որ Զրիստոսն անկեղծ պատրաստակամության շնորհիվ Իրենից չի վանում մեղավորին, այլ կամենում է փրկել նրան։ «Արդարեւ, եթե մեր մարդու հանցանքով մահը թագավորեց միայն այդ մեկով, որչա՛փ եւս առավել նրանք, որ շնորհի առատություն եւ արդա-

րության պարգեւներ են ստանում, կյանքի մեջ պիտի թագավորեն միակ Հիսուս Զրիստոսի միջոցով։ Ապա ուրեմն, ինչպես մեկ մարդու հանցանքով բոլոր մարդիկ դատապարտության մատնվեցին, նույնպես եւ մեկի արդարությամբ բոլոր մարդիկ պիտի հասնեն կյանքի արդարության շնորհին, ուրովիտեւ ինչպես մեկ մարդու անհնազանդությամբ շատ մեղավորներ եղան, նույնպես եւ մեկի հնազանդությամբ շատ արդարներ պիտի լինեն։ Բայց օրենքը մեղտեղ եկավ, որպեսզի հանցանքները բազմանան, քանի որ ուր մեղքը շատացավ, շնորհն առավել եւս շատացավ։ Ինչպես որ մեղքը թագավորեց մահվան մեջ, նույնպես եւ շնորհը պիտի թագավորի արդարությամբ՝ մինչեւ հավիտենական կյանք մեր Տեր Հիսուս Զրիստոսի միջոցով» (Հռոմ. Ե 17-21), քանի որ «մենք հոգու միջոցով հավատից ենք սպասում արդարության հույսը» (Գաղ. Ե 5)։ «Արդարը պիտի ապրի հավատով» (Եբր. Ժ 38)։ Հույսի եւ սիրո սերմերը միավորված են հավատով։ Պողոս առաքյալն ասում է. «Քանի որ նրա պարագայում, ով միացած է Հիսուսին, ո՛չ թվատված լինելն արժեք ունի եւ ո՛չ անթլփատ լինելը, այլ՝ հավատը, որ սիրով է գործում» (Գաղ. Ե 6), «որի միջոցով էլ կարողացանք հավատով մերձենալ այն շնորհին, որի մեջ եւ կանք ու պարծենում ենք Աստծու փառքի հույսով» (Հռոմ. Ե 2)։ Առաջին մեջբերման մեջ ներկայացված է հավատի եւ սիրո միջեւ եղած կապը, իսկ երկրորդում՝ հավատի եւ հույսի։ Իսկ թեսաղոնիկեցիներին ուղղված իր նամակում Պողոս առաքյալը, ներկայացնելով քրիստոնեական համայնքի վիճակը, որի համար ինքն անդադար աղոթում եւ շնորհակալություն է հայտնում Աստծուն, գրում է. «Անդադար իիշում ենք ձեր հավատի գործը, սիրո վաստակը եւ

հույսի համբերությունը մեր Տեր Հիսուս Զրիստոսի, Աստծու եւ մեր Հոր առաջ» (Ա Թես. Ա 3)։

դ) Մրբացում

Զրիստոսյայի դարձը դեպի նոր կյանք եւ կատարելագործվելը կոչվում են սրբացում։ Այս իրողությունը կարելի է նաեւ կոչել քրիստոնեական բնավորության ձեւավորում։ «Սրբանալ» բայը վերցված է Սուրբ Գրքից։ Մեր Փրկիչն այսպես էր աղոթում իր երկնավոր Հորը. «Սրբացրո՛ւ նրանք քո ճշմարտությամբ, որովհետեւ Քո խոսքը ճշմարտություն է... որպեսզի նրանք էլ սրբացվեն ճշմարտությամբ» (Հովհ. ԺԷ 17-19)։ Իսկ Պողոս առաքյալը գրում է. «Եվ խաղաղության Աստվածն Ինքը թող սրբացնի ձեզ ամբողջապես եւ ձեր ամբողջ հոգին, շունչը եւ մարմինը թող անարատ պահի մինչեւ մեր Տեր Հիսուս Զրիստոսի գալուստը» (Ա Թես. Ե 23)։ Զրիստոսյաներին անվանում է նաեւ «սրբացված եւ սուրբ» (Ա Կորնթ. Ա 2, Բ Կորնթ. Ա 1)։

Աստվածաշնչի նշված հատվածներից երեւում է, որ քրիստոսյայի սրբացման համար հարկավոր է Աստծո վերին օգնությունը։ Զրիստոսյան առանց Աստծո օգնության չի կարող իրական քրիստոսյայի կյանք սկսել, այն չի կարող շարունակել առանց Սուրբ Հոգու առաջնորդության։ Սուրբ Գիրքը հստակորեն շեշտագրում է քրիստոսյայի ինքնասրբացման կարեւորությունը. «Մաքրենք մենք մեզ մարմնի եւ հոգու ամեն պղծությունից, կատարյալ դարձնենք սրբությունն Աստծու երկյուղով» (Բ Կորնթ. Ե 1), «որովհետեւ Աստծու կամքը այն է, որ դուք սուրբ լինեք, ... արդարեւ Աստված չկոչեց մեզ պղծության, այլ՝ սրբության» (Ա Թես. Դ 3-7)։

Շարունակությունը՝ էջ 6

ՀԱՅ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ 1960-1980-ԱԿԱՆ ԹՎԱԿԱՆՆԵՐԻՆ

ԱՐՁԱԿ

Մասնակի կրճատումներով

Սկիզբը՝ թիվ 11-17, 19-20

Դժվարությամբ, բայց աստիճանաբար կենսական ավելի խոր շերտեր յուրացնելու ճանապարհով է ընթանում **Երկրորդ համաշխարհային պատերազմի** գեղարվեստական յուրացումը։ Նախկինում ստեղծված ծավալուն վեպ-ժամանակագրություններին (Բ. Թափալցյանի քառահատոր «Պատերազմը», 1946-1965, 3, Զոհարի երկհատոր «Մեծ տան զավակները», 1952-1959) փոխարինում են մարդկային ճակատագրերի դրամատիզմն ու հոգեբանական թափանցումները։ Այս տեսակետից ժամանակին ըստ ամենայնի առանձնացվեց Բ. Հովսեփյանի «Սերմացանները չվերադարձան» (1962) վեպը։

Պատերազմի կյուբի գեղարվեստական յուրացման հարցում եւս նկատելի են սերնդային մտածողության օրինաչափությունները։ Այն դեպքում, երբ պատերազմի մասնակից գրողների սերունդը հիմնականում վերադարձվել է պատերազմական բուն գործողությունները, իրենց դժվար մանկությունն ու պատանեկությունը թիկունքում անցկացրած գրողները պատերազմական կյանքի թատերաբեմը տեղափոխում են թիկունք՝ ձգտելով ավելի հոգեբանական եւ դրամատիկական խորացումներին։

Ճակատային գրողներից վեպերով ու վիպակներով հանդես եկան Ս. Խանգադյանը («Երեք տարի 291 օր»), Մ. Սարգսյանը («Կյանքը կրակի տակ» (1963), «Ճակատագրով դատապարտվածները» (1967), «Որոշել եմ սպանել պատերազմը» (1969), «Սերժանտ Կարոն» (1970), Խ. Գյուլնազարյանը («Ինչ-որ տեղ վերջանում է հորիզոնը» (1966), Զ. Հովհաննիսյանը («Պատերազմի դեմքը» (1986) եւ ուրիշներ։

Դեռեւս 1950-ին տպագրած «Մեր գնդի մարդիկ» գործում **Ս. Խանգադյան**ն արդեն վիպական հյուսվածքի մեջ էր ներքաշել իր պատերազմական տպավորությունները։ Նույն այդ տպավորություններն օրագրային անմիջական գրառումների տեսքով հյուսվել են եւ նրա «Երեք

տարի 291 օր» վեպում, որն ամբողջովին ինքնակենսագրական է։ Շարադրանքն սկսվում է 17 տարեկանում կամավոր բանակ մեկնող գավառական քաղաքի ուսուցչի կենսագրությունից եւ ավարտվում հաղթող բանակի զինվորի իմաստնացած փորձով։ Անմիջական տպավորություններն ու շատ չմանրամասնվող պատումը վեպին հաղորդել են զգացմունքայնություն, նաեւ՝ ներքին զարգացում։ Վեպի հերոսները, հեղինակից բացի, նաեւ նրա հետ պատերազմի դժվարին ճանապարհն անցած մարդիկ են։ Աստիճանաբար կուտակվում է հոգեբանական մի լարվածություն, որն արդյունք է հազարավոր մահերի, դժվարությունների, հաղթանակի սպասումի։ Այդպիսի մի պահի են գրվել այս տողերը.

«Հիմա կանչում է Շուրայի գերեզմանը։
Գրում եմ ականա։ Ցանկացա գրածներս պատռել, Սախնովը չթողեց։
- Խելագարվեցի՞ր, այդ ի՞նչ եք անում։
- Գոնե մեր մասին կիմանան նրանք, ովքեր դեռ չեն եկել, բայց կգան։
Թող իմանան, թե ինչպես ենք մենք հայրենիք պահել»։

Ինքնակենսագրական պատումի տարրեր կան նաեւ մյուս հեղինակների երկերում։ «Ինչ-որ տեղ վերջանում է հորիզոնը» վեպում **Խ. Գյուլնազարյանը** գորակոչի ու ռազմական առօրյայի կողքին պատկերել է գերության դատապարտվածների վիճակը։ Հեղինակն իր անձնական փորձով գիտեր այդ կյանքը, ուր ցանկապատերի ետեւում նաեւ պատմվածքներ ու բանաստեղծություններ էր գրում (այդ ժողովածուն «Գիրք անակնկալ» վերնագրով լույս տեսավ 1985-ին)։ Ահա ամենածանր պայմաններում անգամ ոգու կորովը չկորցրած այդպիսի մարդկանց մասին է վեպը։

Հայ գեղիների մասին է եւ **Մ. Սարգսյանի** «Ճակատագրով դատապարտվածներ» վեպը։ Գերիները գերմանական համազգեստով գործում են բռնագրավված Ուկրաինայում եւ պարտիզանական շարժում ծավալում թշնամու դեմ։ Առօրյային զուգահեռ ուրվագծվում է նաեւ վաշտի 248 մարտիկներից շատերի անցյալը։ Նրանք՝ Վախանը, Մինասը, Սուրենը եւ մյուսները, ճակատագրով դատապարտված մարդիկ են, որոնք բոլորն էլ իրենց

ազատությունը նվաճում են հակառակորդի դեմ ուղղված պայքարով, բայց եւ բռնություն էլ ընկնում են այդ ճանապարհին։ Հերոսական ու ողբերգական, սակայն մարդուն վեհացնող տրամադրություններով է ավարտվում վեպը։


Ինքնակենսագրական պատումը Մ. Սարգսյանի վեպերին ու վիպակներին հաղորդել է ոչ միայն հավաստի ու համոզիչ շունչ, այլեւ նրան մղել է գլխավոր հերոսներին խոսեցնելու առաջին դեմքով։

Ջավախեցի հողագործ սերժանտ Կարոյի բանակային առօրյան է պատկերված «Սերժանտ Կարոն» վիպակում։ Նա «լեզու» բռնող է՝ քաջ ու անվախ, վայելում է շրջապատի հարգանքը, արժանանում Մարուսյայի սիրուն, որը պատերազմի վերջում Կարոյի հետ մեկնում է նրա ծննդավայրը՝ խնամելու նրա որբերին, քանի որ նրանց մայրը մահացել էր։ Վիպակը գրված է հերոսական շնչով, բայց ի տարբերություն «Ճակատագրով դատապարտվածներ» վեպի՝ այստեղ հերոսականությանը զուգակցված է ոչ թե ողբերգականություն, այլ՝ երգիծանք։ Հենց Կարոյի բարբառային խոսքը յուրահատուկ երանգ է հաղորդում պատումին։

Նշված է մյուս գործերում Սարգսյանի վիպական մտածողության մեջ կարեւոր դեր ունի դեպքերի, իրադարձությունների պատկերումը, որը եւ ձեւավորում է խոսքի դիպաշարը, բայց այդ ընթացքում նա երբեմն ձեռքից բաց է թողնում հոգեբանական խորացումների պահը, ինչն ավելի արժեքավոր կդարձներ նրա խոսքը։

Հ. Հովհաննիսյանի «Պատերազմի դեմքը» նախորդ՝ «Ոսկե ամպ» վիպակի անմիջական շարունակությունն է։ 1930-ական թթ. կյանք մտած սերունդը կանգնում է ահավոր աղետի առաջ, եւ նրանք, ովքեր պիտի գրիչ բռնեին, ստիպված՝ ափի մեջ սեղմվում են հրացանի խզակոթը։ Մարդկային կյանքի ու երազանքների եւ պատմաբանական դեպքերի զուգակցումն այս դեպքում եւս տվել է իր ցանկալի արդյունքը՝ քնարական ապրումների եւ արկերի որոտի մեջ կոփելով սերնդի բարոյականությունը։

Ասացինք, որ թիկունքում մեծացած գրողները սերնդային նոր մտածողությամբ են վերարծարծում պատերազմա-



կան տարիների կյանքը։ Դա նկատելի է 2. Խալափյանի, 3. Մելքոնյանի, Բ. Հովսեփյանի, Մ. Մաքսակասյանի եւ այլոց վեպերում, վիպակներում ու պատմվածքներում։ Մակերեսային նկարագրականության եւ դեպքերի առատության հաղթահարումով այդ գրողները հոգեբանական նոր շերտեր են բացում թե՛ թիկունքի կյանքի պատկերմամբ, թե՛ ականա գիւժոր դարձած մարդու ներաշխարհի բացահայտմամբ։

2. Խալափյանի «Երիցուկի թերթիկներ» (1971) վիպակի գործողությունները կատարվում են Հայաստանի գյուղերից մեկում։ Դեպքերի ընթացքը ծավալվում է մեկ ընտանիքի՝ Հունանի եւ նրա երեք որդիների շուրջ։ Հունանի մեկ որդին՝ Ալեքսանը, կյանքը վեր է դառնում քաղաքացիական ամեն մի պատասխանատվությունից եւ դառնում դասալիք։ Նրա հետագա կյանքը մեղքի քաղություն է։ Մարդը դառնում է ականա հանցագործ եւ տանուկ տալիս այն կյանքը, որի համար հանցագործ էր դարձել։ Այս կերպարը, հոգեբանական կերտվածքի տեսակետից, նկատելի ընդհանրություն ունի Վ. Ռասպուտինի «Ապրիլ եւ հիշիկ» վիպակի հերոսի՝ Գուսկովի հետ։ Երկուսն էլ իրենց կյանքը փրկելու սխալ ճանապարհ են ընտրում, եւ երկուսի մեղքն էլ ծանրանում է նրանց հարազատների վրա։ Հունանի միջնեկ որդին՝ Արմենակը, փտախոտից կորցնում է ոտքերը։ Ֆիզկական խեղումը հոգեկան խեղման է հասցնում, անլիարժեքության զգացողությունը նրան մղում է մահվան մեջ որոնելու կյանքի շարունակությունը։

Շարունակությունը՝ էջ 6

ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍՆԵՐ

ՂՈՒԿԱՍ Ա ԿՎՐՆԵՋԻ (1780-1799)

Սկիզբը՝ էջ 4

Չաքարիան մեծամեծների ժողով գումարեց, խոսեց խոցված անձնասիրությամբ եւ բոլորին գրգռեց։ Խոզաբաժնի բացատրությունները հաշվի չառնվեցին, որոշվեց կաթողիկոսի հիշատակությունը չանել եւ կառավարությունից հաստատագիր չվերցնել։ Կաթողիկոսի ընտրությունը հաստատուն ձեւի տակ առնելու համար սահմանեցին չորս կետ եւ պահանջեցին, որ միաբանությունը դրանք ընդունի։ Տիգրանակերտի եպիսկոպոս Կարապետ Ամդեցին պատվիրակ ուղարկվեց Էջմիածին, որ արված առաջարկներն ընդունել տա եւ ընտրությունը լուծարի։ Առաջարկված պայմաններից առաջին կետը Չաքարիայի անձնական վրեժխնդրության հետեւանք էր, քանի որ Չաքարիային գրել էին, թե՛ «ներմայիններ ընտրեցին գՂուկասն եւ քեզ մերժեցին»։ Մյուս երեք կետերով պահանջվում էր, որ առանց Կ. Պոլսի մեծավորների կաթողիկոս չընտրվի, կաթողիկոսն ունենա որոշակի խորհրդականներ եւ գործի նրանց հավանությամբ, Մայր Աթոռի հաշիվներն արժանանան Կ. Պոլսի հավանությանը, եւ Մայր Աթոռի նվիրակները Կ. Պոլսի պատրիարքից ստանան հրամաններն ու հրահանգները։ Մինչեւ պատվիրակության արդյունքներն իմացվելը՝ որոշվեց ընդդիմադիր կացությունը շարունակել։

Էջմիածնում երկու անգամ ժողով գումարվեց, եւ բանակցություններից հետո՝ 1781 թվի մարտին, Մայր Աթոռի միաբանները պատասխան ուղարկեցին Կ. Պոլիս։ Ստանալով պոլսեցիների դժգոհությունը եւ հակառակվելու մասին նամակը եւ լսելով Կարապետ Ամդեցու բանավոր տեղեկությունները՝ Ղուկաս Կարնեցին որոշեց կաթողիկոսությունից ձեռք քաշել։ Սակայն Աթոռն անտերնչության չմատնելու համար միաբանության թախանձանքով շարունակեց իր գործունեությունը՝ առանց կաթողիկոսի անուն տալու, այլապես նա ցանկանում էր կաթողիկոսությանից դուրս գալ եւ միաբանության իր սենյակը գնալ։ Նա համաձայն էր միաբանության օգտաշատ ցանկացած որոշման։ Նա այլեւս կաթողիկոսական աթոռին չնստեց. պաշտոնական գահի մոտ աջ կամ ձախ կողմից փոքր աթոռ դրեց իր համար, որտեղ սովորաբար դրվում էր տեղապահի աթոռը։ Մեղադրանքի պատճառով հրաժարվեց կարմիր կնիք գործածելուց, զգուշացավ եպիսկոպոսներ ձեռնադրելուց։ Կարգադրեց, որ բոլոր վիճակներում հիշեն հանգուցյալ կաթողիկոսի՝ Սիմեոնի անունը։ Գուցե փորձեց իր այդ քայլով շահել Չաքարիայի սիրտը կամ մեղմել նրա գայլայնությունը։ Նա թերեւս կամեցավ բարությանը հաղթել չարին եւ



չուզեց կաթողիկոսական իշխանությամբ բռնի միջոցների դիմել։ Ղուկաս Կարնեցու՝ կաթողիկոսությունից քաշվելուց հետո միաբանությունն իր վրա վերցրեց Աթոռի իրավունքների պաշտպանությունը։ Կարապետ Ամդեցուն պարզ հայտարարեցին, որ Ղուկաս Կարնեցուն ինչպես ընտրել են կաթողիկոս, այդպես էլ ընդունում են։ Միաբանությունը համաձայնեց պոլսեցիների առաջ քաշած չորս կետերից առաջինն ընդունել, սակայն մյուս երեք կետերին խիստ ընդդիմացավ։ Պարզ ասվեց, որ Եկեղեցու կանոնադիրները կաթողիկոսներն են եւ ոչ թե միաբանները, եւ թե՛ պոլսեցի կաթողիկոսին չեն ճանաչում, որը միայն կարող է կոնդակով

կամ կարմիր կնիքով հաստատել այս կամ այն կանոնը, ինչպես կարող են իրենց կողմից ընդունվել, չե՞ որ անվավեր կճանաչվեն։ Միաբանությունը 1781 թվի մարտին հատուկ պաշտոնագիր գրեց եւ ուղարկեց Կ. Պոլիս։ Հավանաբար վերադառնում է նաեւ Կարապետ Ամդեցին։ Պաշտոնագիրն ուղարկվեց Կ. Պոլսում գտնվող Պետրոս եպիսկոպոսին եւ Կ. Պոլսի նվիրակ Մինաս եպիսկոպոսին, ինչպես նաեւ՝ Կ. Պոլսի վիճակների նվիրակ Գալուստ եպիսկոպոսին, որ նրանք պատրիարքի եւ մեծամեծների հետ ունեցած բանակցություններում համաձայն դրա աշխատանք տանեն։ Սակայն այդ պաշտոնագիրը, Կարնից շատ չիեռացած, ընկավ ավազակների ձեռքը, եւ մինչեւ մայիսի 2-ը Կ. Պոլսում ոչ մի թուղթ էլ չէին ստացել։ Այստեղից նոր հարցում արվեց Էջմիածին, եւ նոր պաշտոնագիր ուղարկվեց, ինչի հետեւանքով Կ. Պոլսում պատասխանը շատ ուշ ստացվեց։ Այս ընթացքում շատ մասնավոր նամակներ էլ ուղարկվեցին Կ. Պոլիս, որոնցից էր Ղուկասի՝ 1780 թ. սեպտեմբերի 7-ի նամակը՝ ուղղված սեղանավորների պետ բալկանացի Հարություն ամիրային։ Այս նամակը շատ ուշ՝ միաբանության գործողություններից հետո է ուղարկվել։ Նամակում Ղուկասն ընդունում էր Չաքարիայի արժանավորությունը եւ առաջարկում գալ եւ տիրել կաթողիկոսությանը։ Սակայն սա էլ Կ. Պոլսի պատրիարքարանը չէր ստացել։

Շարունակելի

Բաբկեն ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
77 ԳԱՍ թղթակից անդամ, պրոֆեսոր

ՀԱՅ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ 1960-1980-ԱԿԱՆ ԹՎԱԿԱՆՆԵՐԻՆ

Սկիզբը՝ էջ 5

Իսկ կյանքը նվիրումով իմաստավորելը նրա համար մի պահ դառնում է ինքնավերագոտման հնարավորություն, սակայն կյանքը դաժան է ևս այդտեղ (Ֆիզիկական արատը նրան կտրում է դպրոցի աշխատանքից): Իսկ վերջը ինքնասպանությունն է: Թոփչի պահին ընկնելու մտայնությունը գեղեցկացնում է նրա մահը: Երրորդ որդին՝ Մինասը, պայքարում է ապրելու եւ սիրելու իր բնական իրավունքների համար, սակայն վերջը դարձյալ մահ է, որ հանդիպում է նրան պատերազմի դաշտում:

Փաստորեն՝ վիպակի հերոսներից ամեն մեկի հոգեբանության համար՝ որպես մեկ ընդհանուր բաժանելի, ներկայանում է ապրելու տենչը, ինչն առանձնահատուկ իմաստ է ստանում հատկապես պատերազմական իրադրության մեջ:

Հեղինակը հոգեբանական ներթափանցումներով է ներկայացրել պատերազմը՝ ընդգծելով այդ տարիների կյանքի միակ իմաստը՝ ապրելու տենչ, ինչն իր մեջ ենթադրում է եւ հաղթանակի տենչ:

«Տրոնք արվարձանը» (1971) վիպակում **Հ. Մելքոնյանը** եւս ներկայացնում է թիկունքում մնացած քաղաքի արվարձաններից մեկի բնակիչների կյանքը եւ նրանց հոգեբանության ու կենցաղի մեջ կատարվող աստիճանական տեղաշարժերը: Պատերազմը մարդկանց հասցնում է ահավոր գերլարվածության, որի ճնշմամբ շատ բան սկսվում է վերանմաստավորվել: Մշակվում են բարոյական նոր չափանիշներ, ձեւավորվում է նոր հայացք՝ ապրած եւ ապրելիք տարիների նկատմամբ: Եղբայրը կողոպտում է եղբոր հիշատակը, կինն աճուրդի է հանում հավատն ու սերը, սպասումը քարացնում է մարդկանց հոգիները, վիշտը գու-

նագրկում է բոլոր երազանքները, եւ ամեն ինչ գտնում է իր արդարացումը, բանի որ պատերազմ է: Հացի հերթերում ցրտից չսառչելու համար մարդիկ իրենց փոխարեն նշան արած քարեր են դնում, որոնք անես տապալա-քարեր լինեն, եւ այդ ամենը դառնում է սովորական:

Երեք տարի յոթ ամիս կովելուց հետո տուն դարձող Մխիթար Սողոմոնյանի մենախոսություն-գրույցը դարձել է հեղինակի «Քառասունվեց թվականը» (1980) վիպակի հենքը: Տուն մտնելուց առաջ՝ փետրվարյան մի գիշեր, քայլերը նրան տանում են հայրենի քաղաքի լքված գիւղերից մեկը, ուր անցել էին նրա կյանքի լավագույն օրերը, եւ իր նման մեկի հետ սկսած խոսք ու գրույցի միջոցով իմանում է, թե ինչ է կատարվել իր բացակայության ժամանակ, ով է գոհվել, ում ինչ բախտ է վիճակվել:

Մարդկային տրոհված կենսագրությունների մի ողբերգական պատկեր է **Ռ. Հովսեփյանի** «Ճիչ» (1970) վիպակը:

Պատերազմը վիրավորել եւ թիկունք է նետել Սեդրակին, Գեւորգին, Սահակին: Սեդրակի մի ոտը վնասվել է: Նա խեղդում է քաղաքում թափառող բոլոր շներին, որովհետեւ հիշողությունը սարսափելի պատկերներ է կենդանացնում: Սեդրակն ինքն իր մեջ փորձում է հաղթել պատերազմը, սակայն իր մաքառումների մեջ, այնուամենայնիվ, պարտվում է հիշողությունների, վախի ու սարսափի ահավոր ճնշման հետեւանքով: Եվ մի երեկո՝ շներին խեղդելիս, մի գամփռի առաջնորդ խրվում են նրա կուրորդ: Գերմանական շները զգգգեցին նրան, իսկ այդ վիճակի հիշողությունն ու դրա թողած հետեւանքները սպանեցին: Սեդրակը մեռնում է իր մեջ շարունակվող պատերազմը ճգմելու

պահին: Նա ցանկանում էր իր մեջ եւս հաղթել պատերազմի մնացորդները եւ բոլոր սարսափների առաջ հաստատել իրեն՝ թեւ թերի, փայտե ոտքով, այնուամենայնիվ՝ հաղթանակող Սեդրակին: Սակայն նրա հաղթանակն ու պարտությունը կողք կողքի են:

Գեւորգը մեռնում է հիվանդանոցում: Պատերազմը խլում է նրանից ապրելու իրավունքը:

Սեդրակի եւ Գեւորգի կիսատ մնացած կյանքը շարունակվում է Սահակի մեջ, որն իր եւ իր նմանների ծամածռված կյանքի տաժանքն է քաշում: Սահակը դեռնում էր, իսկ կինը նրա անունով սեւ թուղթ է ստանում: Միլիցիայի սպա Բաբելը փոստատարից վերցնում է նրա հետագա նամակները եւ Սահակին կամաց-կամաց դուրս մղում կնոջ՝ Սանամի հիշողություններից: Սահակը դառնում է կրկնակի դժբախտ: Հեռացող երջանկությունը նրա մեջ կարծես համահարթում է լինել-չլինելու տարբերությունը, որովհետեւ լինելն այլեւս չունի իր արժեքի ներքին բովանդակությունը, եւ հետագա տարիները պետք է դառնային իզուր քարշ տված մի կյանք, իսկ չլինելն այնքան էլ ցավ չէր, որովհետեւ նա արդեն դուրս էր մղվել կյանքից, կորցրել իր տեղը եւ ավելորդ լինելու տագնապ էր զգում: Ահա հաղթանակած բանակի ավելորդ մարդու ողբերգությունը:

Մինչեւ վերջին անկյունը բացվում է Գեւորգի, Սահակի, Սեդրակի եւ Սանամի, եւ ամեն ինչ դառնում է մերկ ու թափանցիկ: Լինել-չլինելու խաղը տանուլ տված մարդկանց սպասվում է հոգեկան կողոպուտ, ներքին ամայություն: Մենության սարսափն անմիջապես մահվան աչքերին նայելիս չկար, քանի որ ետեւում սպասողներ կային: Իսկ երբ կորչում է ամեն ինչ, կիսատ է



մուտ նաեւ գոյության ընթացքը, եւ դա ոչ միայն մեռածների համար, այլեւ՝ ողջերի: Հերոսների ներաշխարհը բացահայտելու այս եղանակը գնալով խորանում է հայ արձակում եւ պայմանավորված է ճգնաժամի մեջ գտնվող անհատի հոգեբանական ճշմարտությունների անսքող մերկացմամբ:

Պատերազմական կյանքի անմիջական արձագանքը կա նաեւ Հովսեփյանի «Հայոց թաղը» (1970) վիպակում: Պատկերված է անմիջապես պատերազմին հաջորդող մի շրջան, երբ հիշողությունները մարդկանց ներկայանում են որպես դեռնու չվարագուրված իրողություն, երբ պատերազմը դեռ շարունակվում է հիշողությունների, հիշատակների, խեղված ճակատագրերի, որը ու անտեր մնացած ընտանիքների մեջ:

Նյութի այս շրջագծի մեջ **Ժամանակակից հայ արձակն ի հայտ է բերում նաեւ բովանդակային եւ բանարվեստային բազմաթիվ առանձնահատկություններ**: Նախ, ըստ ամենայնի գարգանում է վեպը՝ ի հայտ բերելով վեպ-ժամանակագրության, վեպ-էպոպեայի, պատմավեպի, վիպասքի, պատմահեղափոխական, սոցիալական, հոգեբանական, ընտանեկան, կենցաղային,

առասպելաբանական վեպի, հեքիաթ-վեպի ուշագրավ օրինակներ: Ավելի գործուն է դառնում վիպակի տեսակը՝ հասնելով խտացման ու տարածաժամանակային լայն ընդգրկման: Գրական ընթացքի մեջ տեղ են նվաճում պատմվածքը, նորավեպը, հրապարակագրական, ուղեգրական արձակը, ակնարկը:

Դրա հետ մեկտեղ փոխվում են գեղարվեստական մտածողության եղանակները: Վեպի ու վիպակի ավանդական տարատեսակներին փոխարինում են նոր ձեւեր՝ հիմնված գեղարվեստական ժամանակի ու տարածության ըմբռնման նոր սկզբունքների, գիտակցության հոսքի, ներքին խոսքի ընձեռած հնարավորություններին: Ավելի շարժուն ու պատկերավոր է դառնում պատմը, մշակվում է խոսքի արվեստը: Կյանքի իրական ընկալումները նոր եզրեր են նվաճում: «Կյանքից արտագրելու», «բնագիրը վերարտադրելու» իրապաշտական ձեւերին փոխարինում են ավելի ազատ մոտեցումներ՝ խարսխված ռեալիստական մտածողության անհատական եղանակներին՝ քնարափիլիսոփայական, պայմանական, առասպելաբանական եւ այլն:

Դավիթ ԳԱՍՊԱՐՅԱՆ
Բանասիրական գիտ. դոկտոր, պրոֆեսոր

Մարկեւիկի ՕԼԵՄՆԻՅԿԻ

Սկիզբը՝ էջ 4

«Բոլորի հետ շնանցեք արել խաղաղությամբ եւ սրբությամբ, առանց որի ոչ ոք Տիրոջը չպիտի տեսնի» (Եբր. ԺԲ 14):

Սուրբ Գրքում «սրբացում» բառն արտահայտված է նաեւ «նորոգում» բառով՝ որպես կատարված վերածննդի եւ դարձի շարունակություն: «Եվ այս աշխարհի կերպարանքով մի՛ կերպարանվեք, այլ նորոգվեք ձեր մտքի նորոգությամբ, որպեսզի դուք քննեք լավը, եւ թե ինչ է Աստծու կամքը՝ բարին եւ հաճելին եւ կատարյալը» (Ռոմ. ԺԲ 2): «Թեպետեւ մեր այս արտաքին մարդը քայքայվում է, բայց մեր ներքին մարդը նորոգվում է օրըստօրե» (Բ Կորնթ. Դ 16): «Մի՛ ստեղծ միմյանց. հանեցե՛ք ձեր վրայից հին մարդուն իր գործերով եւ հագե՛ք նորը, այն որ նորոգված է գիտությամբ, ըստ իր Արարչի պատկերի» (Կող. Գ 9-10): Զրիստոնյայի սրբացման գործընթացը երկկողմանի է՝ դրական եւ բացասական: Առաջինը՝ թշնամուն վերացնելը՝ հաղթելն է, իսկ երկրորդը՝ նոր կյանքի մեջ բարգավաճելը: Այս երկու կողմերն անբաժանելի են, քանի որ թշնամու հետ պայքարում ամրանում եւ

զարգանում է կյանքի գորությունը, իսկ կյանքի գորացման եւ բարգավաճման համար անհրաժեշտ է սպանել հին մարդուն:

Վերածննդի եւ դարձի մեջ մեղքի ուժը հաղթահարված է՝ մարդու ներաշխարհից՝ արտաքին աշխարհի դուրս բերելով. «Ամեն ոք, ով Աստծուց է ծնված, մեղք չի գործում, որովհետեւ նրա սերմը մնում է նրա մեջ. չի էլ կարող մեղանչել, որովհետեւ Աստծուց է ծնված» (Ա Հովհ. Գ 9): Վերածնված եւ դարձի եկած մարդը չի կարող կամավոր եւ գիտակցաբար մեղք գործել, քանի դեռ գտնվում է վերածննդի եւ դարձի ընթացքի մեջ: Սակայն մեղքը շարունակում է ապրել նրա մեջ եւ, զգալի է ոչ միայն բեռի նման, այլեւ անընդհատ հսկում եւ գայթակղում է՝ փորձելով վերադարձնել հին կյանքին: Դրա համար Աստված ասում է. «Պահի՛ր ինչ որ ունես, որպեսզի ոչ ոք չառնի քո պսակը» (Հայտ. Գ 11): «Ով կարծում է, թե կանգնած է հաստատ, թող զգույշ լինի, գուցե թե ընկնի» (Ա Կորնթ. Ժ 12): Ինչպես Հիսուս Զրիստոսն է, ըստ Դավթի սաղմոսի, «իշխում էր թշնամիների վրա» (ՃԾ 2), այնպես եւ քրիս-



տոնյան, շրջապատված թշնամիներով, իր կատարելագործումն է շարունակում: Այդ պատճառով սրբացում կամ քրիստոնեական նկարագիր ձեռք բերել առանց պայքարի՝ անհնար է: Եթե չկա պայքար, ուրեմն հին մարդը կա՛մ այլեւս ոչնչացված է, կա՛մ կատարյալ է (որն այս կյանքում անհնար է), կա՛մ էլ պարտված է՝ տապալված թշնամիներից: Իմաստունն ասում է. «Եթե նվիրվում ես Տիրոջը ծառայելու, քո անձը փորձությունների պատրաստիր» (Սիրաք Բ 1):

Հիսուս Զրիստոս հաղթեց դրանց. անապատում՝ առաջինին, իսկ Գեթսեմանիի պարտեզում՝ երկրորդին: Առաջինը հավատացյալին հանդիպում է քրիստոնյային կյանքի սկզբում, իսկ երկրորդը՝ ավելի հաճախ վերջում: Առաջինի մասին Հիսուս Զրիստոս այսպես է ասում. «Եթե քո աջ աչքը գայթակղում է քեզ, հանի՛ր այն եւ դեռ գցիր քեզնից, որովհետեւ ավելի լավ է, որ քո անդամներից մեկը կորչի, եւ քո ամբողջ մարմինը չընկնի գեհեն» (Մատթ. Ե 29): Իսկ երկրորդի մասին աշակերտներին ասում է. «Դուք ամենքդ այս գիշեր Իմ պատճառով գայթակղվելու եք. որովհետեւ գրված է, թե հովվին պիտի հարվածեն, եւ հոտի ոչխարները պիտի ցրվեն» (Մատթ. Ի2 3): «Արթո՛ւն մնացեք ու աղո՛թք արեք, որպեսզի փորձության մեջ չընկնեք» (Մատթ. Ի2 41): Պողոս առաքյալը, «աշակերտածների սրտերը ամրացնելով եւ հորդորելով, որպեսզի հաստատ մնան հավատի մեջ», սովորեցնում էր, որ «բազում նեղություններ կրելով է, որ մենք պետք է մտնենք Աստծու արքայություն» (Գործք ԺԴ 21):

Շարունակությունը՝ էջ 8



Մայիկ Առլեն
Ավագ

Սկիզբը՝ թիվ 20

Իսկ այժմ վերադառնալով Մայքլ Առլենին, ավելի կոնկրետ՝ նրան համակած զգացողություններին ու տրամադրություններին: Ըստ էության՝ նրա հոգեվիճակը շատ նման է Փիթեր Նաջարյանի «Ուղեւորություններ» վեպի գլխավոր հերոս Արամ Թովմասյանի հոգեվիճակին: Խոսքն այստեղ վերաբերում է այդ երկու սփյուռքահայերին տիրած հոգեբանական անկարողության զգացողությանը, որն անհանգստություն է պատճառում եւ խաթարում նրանց կյանքի կանոնավոր ընթացքը: Ուստի եւ պատահական եւ զարմանալի չէ, որ Առլենը փորձում է ամեն կերպ ազատվել հայկական ինքնությունից՝ դատապարտելով իրեն եւ իր ընտանիքին հավերժ վտարանդության, ինչին մի ժամանակ դատապարտվել էին ցեղասպանությունից մազապուրծ եղած հայերը: Առլենի նախանշի խորությունն առավել ցայտուն երեւում է հակադրության միջոցով՝ այն դրվագներում, որտեղ Առլեն Կրտսերը ներկայացնում է իր ընտանիքի հայկական կեսը: Նա խոսում է հայերի այգեգործության նկատմամբ ունեցած ավանդական սիրո, մարդամոտության, գործարար ջիղի, ծնողների եւ երեխաների սերտ կապվածության մասին (տե՛ս Michael J. Arlen, Նույն տեղում, էջ 90-91):

Առլենի ծնողների հասուն կյանքը ոչ այլ ինչ է, եթե ոչ միտումնավոր հրաժարում իրենց գունագեղ, անհանգիստ եւ հաճախ շփոթության մեջ գցող անցյալից:

Մայիկ Առլեն Կրտսեր եւ նրա գրական գործունեությունը

Առլենն ու իր կինը մի տեսակ օտարված իրենց նոր շրջապատից: Ինչեւէ, նրանք բնավ չեն ցանկանում օտարել իրենց ժառանգներին այդ նոր միջավայրից, ընդհակառակը՝ ջանք չեն խնայում նրանց օտար միջավայրին ինտեգրելու համար: Առլեններն իրենց ժառանգներին լավ կրթության են տալիս, քանզի դա շատ կարեւոր էր նոր շրջապատի հետ միաձուլվելու համար, չեն անտեսում նույնիսկ այնպիսի մանրուքներ, որոնք առաջին հայացքից կարող են երկրորդական թվալ. խոսքը վերաբերում է երեխաների հագուկապին, որը պետք է համապատասխաներ օտար հասարակության նախասիրություններին ու ճաշակին: Սակայն, ինչպես վկայում է Առլեն Կրտսերը, իր ծնողների ջանքերը չեն հասնում նպատակակետին: Գրողը շատ հուզիչ կերպով ցույց է տալիս իր «Տարագիրներ» ինքնակենսագրական երկում, որ անցյալից փախչելը գործնականում անհնար է: Մարդու էթիկ ծագումը կարող է բարդացնել կյանքը, եթե նույնիսկ փոխել ես հայկական անունդ: Հայր Առլենը դեմ հանդիման կանգնում է երկու լրջագույն խնդրի առջև. մի կողմից նա ի գործ է լիովին հարմարվելու օտար միջավայրին, մյուս կողմից՝ նրան թույլ չեն տալիս ինտեգրվել այդ միջավայրին: Եվ սա այն դեպքում, որ նա քիչ բան չէր արել Մեծ Բրիտանիայի համար: Խոսքը չի վերաբերում լոկ նրա փառահեղ գրական գործունեությանը: Նա նաեւ զգալի ներդրում ուներ Բրիտանիայի հասարակական կյանքում: Բավական է հիշել թեկուզ այն, որ նա 1940 թ. Նշանակվել էր քաղաքացիական պաշտպանության կոմիտեին կից հասարակայնության հետ կապերի գծով պետ: Նշանակումից ընդամենը մեկ տարի անց Առլենի հավատարմությունը Բրիտանիայի նկատմամբ կասկածի էր ենթարկվել Համայնքների պալատում եւ սա այն դեպքում, որ նա քննադատության էր են-

թարկել Գերմանիային եւ նրա քաղաքականությունը: Այսպիսով՝ տաղանդավոր գրողը եւ հասարակական գործիչը ստիպված եղավ ընդմիջտ տեղափոխվել Ամերիկա: Վերն ասածից կարելի է մի պարզ տրամաբանական եզրակացության հանգել. որքան էլ տարագիրը հավատարմորեն ծառայի որեւէ օտար երկրի ու ազգի, միեւնոյն է նա օտար է մնում, ուստի եւ չի կարող դառնալ տվյալ հասարակության լիարժեք ու լիիրավ մասնիկը: Այս լրջագույն հիմնախնդրի մասին բազմիցս են գրել սփյուռքահայ գրողները, այդ թվում՝ Մայքլ Առլեն Կրտսերը:

Առլեն Կրտսերին հուզում է մի հարց. ինչպե՞ս կարող է առողջ կապը հարազատ էթնիկ ժառանգության հետ օգնել մարդուն բացահայտելու իր կենսական տեղը որդեգրված մշակութային միջավայրում: Առլեն Կրտսերը ցավ է ապրում, երբ շարունակ տեսնում է, որ իր հոր կենսական հնարավորությունները պարզապես հոդս են ցնդել: Նա տեսնում է, թե ինչպես է իր հայրը փորձում նմանվել օտարներին, բայց վերջ ի վերջո պարզվում է, որ նա շատ տարբեր է նրանցից (տե՛ս Michael J. Arlen, Նույն տեղում, էջ 45): Հայր Առլենի երկակի մոտեցումը հայկական անցյալի հանդեպ խախտում է նրա կյանքի հավասարակշռությունը: Նա ուզում է մոտ լինել իր երեխաներին, բայց չգիտի, թե ինչպես: Նա նաեւ դժգոհ է իր մասնագիտական հաջողությունից:

Հրաժարվելով հայկական արմատներից եւ հեռանալով Անգլիայից՝ Ավագ Առլենն այդպես էլ չի կարողանում իր տեղ գտնել նոր երկրում՝ Ամերիկայում: Եթե Ավագ Առլենին չի հաջողվում իր տեղը գտնել որեւէ օտար երկրում եւ դառնալ լիարժեք օտարազգի, ապա հորեղբայր Թաքվորն այս առումով որեւէ խնդիր չուներ. «Թաքին» այս հրաշալի հայորդին, բնավ չի փորձում նմանվել անգլիացու...

Բայց եւ այնպես նա շատ նման է անգլիացու. նա խոսում է հրաշալի անգլիական առոգանությամբ, իսկ նրա հետաքրքրությունները նույնպես նման են անգլիացու հետաքրքրություններին: Նա կարմրավուն դեմք եւ բարեհոգի ծիծաղ ունի: Հորեղբայր Թաքին սիրում է բնությունը, այգիներն ու այգիներում աճող բանջարեղենը: Նա զբաղվում է անգլիական սպորտաձեւերով: Մի խոսքով՝ Թաքվոր Գույումճյանն իրապես հրաշալի անգլիացի էր» (տե՛ս Michael J. Arlen, Նույն տեղում, էջ 89):

Թաքվոր Գույումճյանը մարմնավորում է կայունության մի փոքր օազիս Առլենի պատմության մեջ: Թաքվորը չի ցուցաբերում զսպված վախի զգացում, նա չի դրսևորում շփոթմունքի զգացում՝ կապված հայ եւ անգլիացի «պիտակների» հետ: Թաքվորը խույս չի տալիս իր ինքնությունից եւ լավատեսությամբ է լցված ներկայի հանդեպ: Հայկական առասպելաբանությունը նրա համար ոչ թե խորհրդանշների համակարգ է, այլ ազգային մշակույթի հետ կապված ամենօրյա հոգսերի բնականոն արտահայտություն: Խոսքը վերաբերում է այգեգործությանը եւ գյուղատնտեսական աշխատանքներով զբաղվելուն: Սրանք զբաղմունքներ են, որոնք հավասարապես հոգեհարազատ են թե՛ հայի եւ թե՛ անգլիացու համար: Իսկ Թաքվորի մեծահոգությունը կարող է իսկական ոգեշնչման աղբյուր հանդիսանալ:

Մայքլ Առլեն Կրտսերի երկրորդ ուշագրավ գործը «Ուղեւորություն դեպի Արարատը» ինքնակենսագրական երկն է, որի համար գրողը 1976 թ. արժանացավ Ազգային գրքի մրցանակի: Գրքի գրավչության գաղտնիքը թերեւս այն չէ, որ դրանում ներկայացված է հայ ժողովրդի անցյալը, կամ էլ այն, որ դա առնչվում է «Տարագիրներ» երկին:

Շարունակությունը՝ էջ 8

Ն. ԲԵՐԴՅԱՆԷՎ

Ընդհուպ մինչեւ վերջերս մերժում էին «նոր հոսանքները» արվեստում, փիլիսոփայության մեջ, կրոնում: Այժմ այդ թեմաները դարձել են մոդա, դրանց մասին այսօր գրում են թերթերում, չնայած այդ թեմաներն ունեն անփառունակ հաջողություն: Եվ եթե նախկինում սարսափելի էր անուշադրությունը, ապա այժմ չափից ավելի ուշադրությունն է դարձել սարսափելի: Այն, որ գրական-գեղարվեստական եւ փիլիսոփայական հոսանքները դառնում են մոդա, մեծ դժբախտությունն է, բայց որ կրոնական թեմաներն են դառնում մոդայիկ, դա արդեն իսկական դժբախտություն է: Ներանձնական ապրումներն ու մտորումները փողոց են դուրս գալիս եւ ճակատագրորեն գեղեցկանում: Մեզանում ամեն ինչն է ասես դառնում մոդա. ոչինչ խորությամբ չի պատկաստվում: Այսպես կոչված «նոր» գաղափարներն իրական ազդեցություն չեն գործում, մեզանում չի ամրանում նոր գիտակցությունը, այլ միայն հող է փխրեցնում, սրում սոսկ հոգու քառսը: Պետք է սարսափել ներկա աճող սերնդի համար: Այդ «նորը» վարժեցնում է բոլոր գաղափարների եւ բոլոր արժեքների նկատմամբ թռուցիկ վերաբերմունքի, նրանում չկան ավանդույթներ, չկա ոչինչ ամուր ու հաստատուն: Կրոնական բուն գաղափարները, որոնք կոչված են վերջ դնելու հոգու անարխիային, նոր ավանդույթներ ստեղծելուն, ամրապնդելուն եւ դրանք հինի կամրջելուն, ընկալվում են որպես այդ անարխիայի, այդ ժամանակաշրջանի անսկզբունքայնության դրսևորումներից մեկը: Կարելի է մխիթարվել նրանով, որ հեղափոխական ժամանակահատվածը միշտ էլ ուղեկցվում է գաղափարական անարխիայով. հին արժեքները խեղդվում են, իսկ նորերը դեռես չեն ստեղծվում: Մենք չափազանց արագ մուտք գործեցինք ռեակցիոն մի ժամանակաշրջան, որը ոչ թե արարում, այլ քան-

«ԳՐԱԿԱՆ ԱՆԿՈՒՄ»-Ի ՄԱՍԻՆ

Տղազրվել է 1908 թ. դեկտեմբերի 12-ի «Московский Еженедельник» թարբերականում

դում է, եւ հեղափոխականի մերժումից դեպի հետադիմականի մերժումն ընկած անցումը լուրջ վտանգ է ներկայցնում ապագայի համար: Հինը, փտածը, կեղծը դեռես մինչեւ վերջ քանդված չեն, իսկ նորը, կենդանին, ճշմարիտը չեն ստեղծվել:

Մեր ապրած ժամանակաշրջանն այնքան բարդ է, որ այն չեն կարող բացատրել պարզ սխեմայով: Մարքսիստների՝ տնտեսական մատերիալիզմի, դասակարգային ուսմունքի եւ ամեն մի մատերիալիստական անպետքության միջոցով մեր տանգնապներից գլուխ հանելու փորձերը ծնում են մեծ զավեշտի ժամանակավոր արդյունք: Չավեշտականի առջեւ անահ լինելը դիվապաշտություն է, սակայն, այնուամենայնիվ, երբեմն անհարմար եւ զգում այդ անվախ մարդկանց համար: Կան բաներ, որոնք հավերժական գեղագիտական բնագոյ թույլ չի տալիս: Սակայն այդ առողջ բնագոյ չի կասեցրել պարոն Լուսաչարսկու գրիչն այն պահին, երբ նա գրում էր, թե հիսկոտակային մարգարեները մանր բուրժուազիայի գաղափարախոսներ էին, եւ իր մարքսիստական ժարգոնով նսեմացնում էր անցյալի մեծ անուններն ու դավանանքը, «մանր սեփականատերերի գաղափարախոսությունից» ցատկում Հին Կտակարան՝ գտնելու ժամանակակից սոցիալիստներին, հեղափոխականներին հարազատ գաղափարախոսություններն էին եւ այլն (տե՛ս Լուսաչարսկի. «Կրոնը եւ սոցիալիզմը»): Բնագոյ չի կասեցրել նաեւ «Գրական անկում» ժողովածուի հեղինակներին, երբ նրանք ողջ նոր գրականությունը՝ ինչպես գեղարվեստական, այնպես էլ կրոնափիլիսոփայական, միանգամից ընդունեցին թե՛ որպես մանր եւ թե՛ որպես խոշոր բուրժուազիայի, թե՛ ֆեոդալական պալատականների եւ թե՛ պրոլետարացված մտավորականության եւ չգիտեմ, թե էլ ինչի գաղա-

փարախոսություն: Այստեղ տուժում է ոչ միայն գեղագիտությունը, այլեւ՝ տրամաբանությունը: Ոմն պարոն Ստեկլովը «Գրական անկում» հանդեսում (էջ 41) քաջություն ունեցավ գրելու հետեւյալը. «Լավրովի, Միխայլովսկու, Ելիսեեի եւ Շչեդրինի փոխարեն մտավոր մոդայի օրենսդիրներ դարձրին Դոստոևսկուն, Լ. Տոլստոյին եւ Վլ. Սոլովյովը: Անհետացավ հեղափոխության մեծ Պատրոկլոսը (հունական դիցարանում Պատրոկլոսը Տրոյական պատերազմի հերոսներից էր, Աքիլլեսի ընկերը - թրգ.), եւ նրա փոխարեն հասարակական կարծիքի գահին բարձրացավ խղճուկ առօրեականության եւ խորհրդամոլության թոթովախոս ու անճոռնի Թերսիտեսը» (Տրոյական պատերազմի մասնակից: Նրա կերպարում արտացոլվել են համայնքի հասարակ անդամների փորձերը՝ պաշտպանելու իրենց իրավունքները տոհմական ավագանու ոտնձգություններից - թրգ.): Չավեշտականի առջեւ պարոն Ստեկլովն իր անվախությամբ իրապես առաջիններից մեկն է՝ ամենաբաշքը: Ամեն մեկը չէ, որ հանդգնում է ասել, որ Լավրովի, Միխայլովի, Ելիսեեի եւ Շչեդրինի փոխարինողները Դոստոևսկին, Լ. Տոլստոյն ու Վլ. Սոլովյովն են՝ միակ հանճարներն իրենց էպոխայի, Ռուսաստանի հպարտությունը, որ Պատրոկլոսը փոխարինվեց Թերսիտեսով, որ կա գրական անկում ու այլասերում: Ելիսեեին փոխարինեց Վլ. Սոլովյովը. ահա թե ինչպես է պարոն Ստեկլովը ներկայացնում ճղճիմ առօրեականության հաղթանակը: Շչեդրինը սքանչելի գրող էր, բայց հանկարծ ոմն Դոստոևսկի կամ ոմն Տոլստոյ դարձան մտքերի իշխողը, ահա եւ անկում, ահա եւ դեկադանս: Այստեղ բացատրության հարկ չկա: Նույն Ստեկլովի իբեւնիս համարում է հոգեկան հիվանդ ու այլասերված եւ գերագնացվով Մաքս Նորդաուին՝ հավելում է,



որ նա քաղցեմիական առողջության սահմանափակ գաղափարախոս է (Նորդաուին գնահատելիս Բերդյաևը հավանաբար հենվել է նրա հանրահայտ «Այլասերություն» գրքի վրա, որը ռուսերենով լույս է տեսել 1893 թ. Կիեւում, ապա նաեւ՝ Ս. Պետերբուրգում):

Կրոնափիլիսոփայական որոնումների տարօրինակ քննադատություն. քննադատում են ոչ թե գաղափարները, այլ՝ անձներին: Բուն գաղափարների, նրանց արժեքների, նրանց ճշմարտության մասին ոչինչ չեն ասում, չեն փորձում նույնիսկ մուտք գործել կրոնական իրականության աշխարհը: Կատարվում է սոցիոլոգիական եւ կամ հոգեբանական հետաքննություն. ամեն ինչ բացատրում են կա՛մ ռեակցիոն եւ դասակարգային հոգեբանությամբ եւ կա՛մ՝ կեղծ ու պաթոլոգիական:

Շարունակությունը՝ էջ 8

Ն. ԲԵՐԴՅԱՆԷԼ

«ԳՐԱԿԱՆ ԱՆԿՈՒՄ»-Ի ՄԱՍԻՆ

Սկիզբը՝ էջ 7

Բոլոր այդ դասակարգային, պաթոլոգիական եւ այլ բացատրություններից այնպիսի քաղցրեկական սահմանափակության հոտ է գալիս, որ շնչելու օդ չի մնում: Անհրաժեշտ է բացել պատուհանները կամ էլ կոտրել դրանք: Ամերիկացի սքանչելի հոգեբան եւ փիլիսոփա Ջեմսն իր «Կրոնական փորձառություն» գիրքն սկսում է միստիկայի ու պաթոլոգիական իրավիճակների միջեւ կապ ստեղծելուց (*ռուսերեն թարգմանությամբ՝ Ու. Ջեմսի գիրքը կոչվում է «Կրոնական փորձառության բազմազանությունը» (Մ. 1910): Բերդյաեւն օգտվել է ֆրանսերեն թարգմանությունից, որից եւ հղումներ է կատարել իր «Կաթոլիկական մոդեռնիզմը եւ ժամանակակից գիտակցության ճգնաժամը» հոդվածում*): Ստեկլովն այստեղ արդյո՞ք Մաքս Նորդաուի եւ այլ փարիսեցիների ոգով է եզրակացություններ անում: Ո՛չ: Ջեմսը շատ նուրբ մտածող է, շատ լրջախոս: Նա ասում է՝ թող միստիկական փորձն առնչվի այն իրավիճակներին, որոնք գիտության մեջ ընդունված է ասել պաթոլոգիական, դրանով բնավ չի լուծվում միստիկական փորձառության արժեքների, դրանց նշանակության մասին հարցը. արժեքների եւ ճշմարտության մասին հարցը չի լուծվում եմպիրիկ ծագմամբ եւ այս կամ այն եմպիրիկ կապով: Դա փիլիսոփայական քաջամարտ է: Ջեմսը միստիկական եւ կրոնական փորձառությունը՝ որպես մարդկային փորձառության ընդլայնում, հարստացում, դրական է գնահատում: Ջեմսը միստիկ չէ, կրոնական մտածող չէ, Ջեմսը գիտական փիլիսոփայության ներկայացուցիչ է՝ ամենանշանավոր ժամանակակից հոգեբաններից: Իհարկե պարոնայք Ստեկլովը, Մորոզովը եւ իրենց նմանները կարող են Ջեմսի մոտ տեսնել մանր կամ խոշոր բուրժուա-



գիայի, նույնիսկ ֆեոդալական պալատականների գաղափարախոսություն, ինչն այդ դեպքում կլինի հատուկ փոխադրում Ամերիկա, բայց բուն Ջեմսի արժեքը նման մանրություններից չի խախտվի: Ջեմսի օրինակից ես ահա թե ինչի հանգեցի: Ինչպես էլ բացատրեն այժմ Ռուսաստանում ծագած կրոնական ապրումներն ու կրոնական փնտրությունները, դրանով չի լուծվում եւ նույնիսկ հարց չի դրվում կրոնական հավատքի արժեքների եւ ճշմարտության մասին: Թող որ մարքսիզմի եւ այլ ավելի չափավոր ուղղությունների տեսակետից կրոնական վերածնության նշանները վերաբերեն հասարակական պաթոլոգիային եւ ոչ՝ ֆիզիոլոգիային:

Շարունակելի
Թարգմանությունը՝
Աստղիկ ՍՏԱՐՈՆԵՅԱՆԻ

Մարկեդուին ՕԼԵՍԵՒՅԿԻ

ՎԵՐԱԾՆՈՒՆԴ ԵՎ ՕՐՆՆՈՒԹՅՈՒՆ

Սկիզբը՝ էջ 6

Գայթակցությունները մարդու սրտում կասկած են առաջացնում Աստծու անկեղծության եւ նախախնամության, սեփական անձի փրկության հանդեպ: Գայթակցվեց նաեւ Հովհաննես Մկրտիչը: Գայթակցության պահին իր աշակերտներին ուղարկեց Հիսուսի մոտ՝ հարցնելով. «Դո՞ւ ես, որ գալու էիր, թե՞ ուրիշին սպասեմք» (Մատթ. ԺԱ 3): Իսկ երկրորդի պարագայում Պողոս առաքյալն այսպես է գրում. «Եթե Աստված մեր կողմն է, ո՞վ կլինի մեզ հակառակ: Նա, որ Իր Որդուն իսկ չիսնայեց, այլ մեր բոլորի համար մահվան մատնեց Նրան, էլ ինչպես մեզ չի շնորհելու ամենայն ինչ Նրա հետ մեկտեղ: Ո՞վ է, որ մեղադրելու է Աստծու ընտրյալներին: Աստված է, որ արդարացնում է: Իսկ արդ, ո՞վ է, որ դատապարտելու է: Զրիստոս Հիսուս է, որ մեռավ, մահավանդ որ հարություն էլ առավ եւ Աստծո աջում է եւ բարեխոս է մեզ համար» (Հռոմ. Ը 31-34): Անվասա եւ զգուշորեն հաղթահարելով գայթակցությունները՝ քրիստոնյան սկսում է կառուցել բարոյական կյանք, որի հետ ձեւավորվում է նաեւ Նրա քրիստոնեական բնավորությունը: Ինչպես Զրիստոսի, այնպես եւ գայթակցության դեմ պայքարում հաղթանակած՝ վերածնված քրիստոնյայի հոգեւոր կյանքում մշտապես աճ է արձանագրվում: Երբեմն հոգեւոր աճը նույնացվում է մարմնավոր աճի հետ: Հասակի ավելացումն օրեցօր նկատելի չէ, բայց ժամանակի ընթացքում դառնում է տեսանելի: Այդպես է նաեւ հոգեւոր աճի պարագայում: Որոշ ժամանակ անց թե՛ մենք եւ թե՛ մեզ շրջապատող մարդիկ անկարող են չնկատել մեր մեջ կատարվող դրական փոփոխությունները: Փոփոխությունն այն է, որ դառնում ենք ունակ՝ խնդիրներին հեշտորեն եւ կատարյալ լուծում տալու, ինքնագոհության գնալու, համբերություն ու ներողամտություն ցուցաբերելու եւ այլն: Պողոս առաքյալը գրում է. «Եղբայրներ՛, պարտավոր եք միշտ գոհություն մատուցել Աստծուն ձեզ համար, ինչպես որ արժանի իսկ է, քանի որ ավելի ու ավելի է աճում ձեր հավատը, եւ շատանում է ձեզնից յուրաքանչյուրի սերը միմյանց հանդեպ, այնպես որ մենք ձեզնով պարծենում ենք Աստծու եկեղեցիներում ձեր համբերության եւ հավատի համար՝ ձեր այն բոլոր հալածանքների եւ նեղությունների մեջ, որոնց դուք համբերում եք» (Բ Թես. Ա 3-4): Սրբության մեջ գտնվող քրիստոնյայի վարքը կարելի է համատեղել հավատարմության հետ. «Եղի՛ր հավատարիմ մինչեւ մահ, եւ Ես քեզ կյանքի պսակը պիտի տամ», - ասում է Սուրբ Հոգին (Հայտ. Բ 10): Հավատարմությունը համատեղում է ոչ միայն այն, ինչ որ ձեռք է բերված բարոյական վերածննդի ժամանակ, այլեւ շնորհների ավելացումը: Այս գաղափարը հստակ արտահայտված է Զրիստոսի պատմած «Տաղանդի առակում»:

Շարունակելի
Ռուսերենից թարգմանեց
Օլգա ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԸ

Հոգեհանգիստ Մայր Աթոռ Ս. Էջմիածնում

Նոյեմբերի 12-ին Մայր Աթոռ Սբ Էջմիածնում գումարված Վանական խորհրդի նիստի ժամանակ Ամենայն Հայոց Կաթողիկոսը մեծ ցավով անդրադարձավ Դամասկոսի Սբ Սարգիս եկեղեցուն կից գործող Ազգային Սրբոց Թարգմանչաց ճեմարանի մոտ նոյեմբերի 11-ին տեղի ունեցած ահաբեկչական գործողությանը, որի հետեւանքով զոհվել են մարդիկ, այդ թվում՝ երեխաներ:

Նորին Սրբությունը խստորեն դատապարտեց կրթական հաստատության հանդեպ իրականացված հրեշավոր այս հանցագործությունը՝ անընդունելի նկատելով նաեւ այն, որ հակամարտության ընթացքում մասնավոր թիրախի տակ են առնվում քրիստոնեական համայնքները:

Ի Տեր հանգավ Սարգիս արքեպիսկոպոսը

Նոյեմբերի 6-ին՝ 58 տարեկան հասակում, վախճանվեց Մայր Աթոռի միաբան, Կոտայքի թեմի Թեղենիքի Սրբոց Նահատակաց եկեղեցու հոգեւոր հովիվ Սարգիս արքեպիսկոպոսը: Հայր սուրբի անժամանակ վախճանը մեծ ցավ է Մայր Աթոռ Ս. Էջմիածնի միաբանության համար:

Հայր Սարգիս արքեպիսկոպոսը ծնվել է Ախալքալաքի շրջանի Ազավերթ գյուղում 1955 թ: 1978 թ. ավարտել է ԵՊՀ-ի մեխանիկայի եւ մաթեմատիկայի ֆակուլտետը: 1981 թ. ավարտել է Մոսկվայի պետական համալսարանի մեխանիկայի եւ մաթեմատիկայի ֆակուլտետի ասպիրանտուրան եւ պաշտպանել թեկնածուական դիսերտացիա: 1982-1991 թթ. աշխատել է ԵՊՀ-ի մեխանիկայի եւ մաթեմատիկայի ֆակուլտետում՝ որպես գիտաշխատող: 1993-1995 թթ. աշխատել է «Գանձասար» աստվածաբանական հանդեսում: 2001-ից ծառայել է Ս. Գեղարդավանքում: 2002-2004 թթ. ուսանել է Մայր Աթոռ Ս. Էջմիածնի քա-



Այս կապակցությամբ Ամենայն Հայոց Հայրապետը Դամասկոսի հայոց թեմի առաջնորդ Արմաշ եպս Նալբանդյանի միջոցով իր վշտակցությունն է հայտնել զոհերի ընտանիքներին ու հարազատներին՝ ընդգծելով, որ Մայր Աթոռ Ս. Էջմիածինը պիտի շարունակի իր գորակցությունը բերել սիրիահայությանը՝ հոգեւորականաց դասին եւ ողջ ժողովրդին:

Նոյեմբերի 17-ին Մայր տաճարում մատուցված Պատարագի ավարտին կատարվեց հոգեհանգստյան արարողություն՝ զոհվածների հոգիների հանգստության համար, ինչպես նաեւ աղոթք՝ Սիրայում խաղաղության վերահաստատման համար:

հանայից պատրաստման լսարանում: 2004 թ. հոկտեմբերի 3-ին ձեռնադրվել է սարկավագ: 2004-2006 թթ. ծառայել է ՀՀ զինված ուժերում՝ որպես հոգեւոր սպասավոր: 2006-2009 թթ. եղել է Ս. Գեղարդավանքի սարկավագ: 2009 թ. հուլիսի 19-ին ձեռնադրվել է կուսակրոն քահանա: 2009-ի սեպտեմբերից ծառայում էր Կոտայքի թեմի Թեղենիքի Սրբոց Նահատակաց եկեղեցում՝ որպես հոգեւոր հովիվ:


Լրատվական կյուբերը՝
ՄԱՅՐ ԱԹՐՈՒ ՍԲ ԷՋՄԻԱԾՆԻ
ՏԵՂԵՆԻՔԻ ՍՐԵՆԻՔԻ ՍՐԵՆԻՔԻ

Մայիկ Առլեն Կրսսեր Եւ Մրա գրական գործունեությունը

Սկիզբը՝ էջ 7

Առլենի գիրքը հետաքրքիր է այն առումով, որ դրանում փորձ է արված հասկանալու հայի բնավորությունը եւ խմբային վարքագիծը հայոց կոտորածներից հետո: Առլեն Կրսսերի ստեղծագործություններում՝ մասնավորապես «Ուղեւորություն դեպի Արարատը» գրքում, հատուկ նշանակություն ունի Արարատ լեռը, որը հանդես է գալիս որպես հայկական ոգու խորհրդանիշ: Առլենը բացահայտում է, որ բիբլիական լեռը դարձել է «ավելի մեծ»: Արարատը կարծես անխռով կուռք լինի, որի շուրջ մարդիկ հազարամյակներ շարունակ առասպելներ են հյուսել:

Իր ուսումնասիրության ընթացքում Առլենը հանգում է նույն եզրակացությանը, որին մի ժամանակ հանգել էին սփյուռքահայ այլ գրողներ: Համաձայն այդ եզրակացության՝ հայ ժողովուրդը դարեր շարունակ այլ ազգերի հպատակն է եղել, սակայն չի շեղվել ճշմարիտ ուղուց: Առլեն Կրսսերը մի փոքր պատմական էքսկուրս է կատարել՝ նպատակ ունենալով առավել օբյեկտիվորեն ու համակողմանիորեն պատկերելու իր ազգին. «Հայերը սկզբնապես խիզախ լեռնեցիներ էին: Միգուցե նրանք բարեկիրթ ու խելացի չէին, լեռնեցի ժողովուրդները հազվադեպ են քաղաքակիրթ ու խելացի լինում, բայց դրա փոխարեն նրանք անմիջական են, գործնական եւ տոկոս» (տե՛ս Michael J. Arlen, Passage to Ararat, Farrar, Straus and Giroux, New York, 1975, էջ 187): Դարերի ընթացքում հպատակվելով օտարներին եւ կորցնելով անկախությունը՝ հայը երկրպագեց Արարատ լեռանը, եւ այն դարձավ փառահեղ անցյալի եւ ապկալիպտիկ հույսի խորհրդանիշ: Հայերը, վաղեմի ուժն ու զորությունը կորցրած մյուս էթնոսների



պես, մտասերեռվեցին իրենց պատմության վերելքների վրա:

Շարունակելի
Տիգրան ՄԱՆՈՒՅԱՆ
Բանասիրական գիտ. թեկնածու

ԵՐԻՍՏՈՆՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆ

Կրոնական, մշակութային, լրատվական երկշաբաթաթերթ

Հիմնադիր՝

Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին

Հրատարակիչ՝

«Զրիստոնյա Հայաստան»

թերթի խմբագրություն

Գլխավոր խմբագիր՝

Աստղիկ Ստամբուլյան

Գրանցման վկայական՝ 624

Խմբագրության հասցեն՝

Մայր Աթոռ Սբ Էջմիածին

Հեռախոս՝ 517197

Էլ. փոստ՝ gh@etchmiadzin.am

web կայք՝

kh-tert.livejournal.com

krishayas.wordpress.com

Ստոր. տպագր.

18.11.2013 թ.

Տպագրանակը՝ 2100

Գինը՝ 50 դրամ